ՀԵՏԱՀԱՅՅՑ.

մի եվ խաղաղության մասին

ՀԵՏՀԱՅԱՑ.

ՁԱՅՆԵՐ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀՏԴ 316
ԳՄԴ 60.5
Հ 550

Մեթոդաբանական և վերլուծական ուղենիշները՝ Ժաննա Անդրեասյանի և Աննա Ժամակոչյանի

Հետազոտողներ՝ Ագապի Իվանյան, Մարիամ Խալաթյան, Շահանե Խաչատրյան, Արփի Մանուսյան, Նվարդ Մարգարյան

Համադրական վերլուծությունը՝ Մարիամ Խալաթյանի

Վերլուծաբան-խմբագիր՝ Արփի Մանուսյան

Լուսանկարները՝ Նվարդ Մարգարյանի

Տեսանկարահանումները՝ Շահանե Խաչատրյանի

Սրբագրումը՝ Ազնիվ Նասլյանի

Շարվածքը և ձևավորումը՝ Նորա Գալֆայանի

Հետահայաց. ձայներ պատերազմի և խաղաղության մասին.- Եր.: «Սոցիոսկոպ» ՀԿ, 2021.- Հ 550, 116 էջ:

ՀՏԴ 316
ԳՄԴ 60.5

Նվիրվում է Հայաստանում և Ղարաբաղում մեր հետազոտությանը մասնակցած բոլոր նրանց, ովքեր խաղաղություն էին ցանկանում, բայց ստիպված եղան անցնել պատերազմի արհավիրքի միջով:

© «Սոցիոսկոպ» ՀԿ, 2021
Բովանդակության համար պատասխանատու է միայն վերլուծական թիմը:

ISBN 978-9939-1-1269-5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔ

Առաջաբան 7

Հետազոտության մեթոդաբանական շրջանակը 10

1 ՊԱՏԵՐԱԶՄԻ, ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԸՄԲՌՆՈՒՄՆԵՐԸ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

1.1. Առկախված պատերազմը և խաղաղության սպասումը 19

1.2. Ղարաբաղյան կոնֆլիկտը և հեղափոխության փորձընկալումը 26

1.3. Պատերազմի ազդեցությունը և ապագայի հարցերը 28

1.4. Իրավունքի սահման(ում)ները 56

2 ՊԱՏԵՐԱԶՄԻ, ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԸՄԲՌՆՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԵՎ ՈՉ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

2.1. Սահման և հեռավորություն 73

2.2. Պատերազմ և խաղաղություն. հանրային ընկալումները 75

2.3. Իրավունքները, դրանց պաշտպանության և զիջման սահմանը 98

3 ՀԵՏԳՐՈՒԹՅՈՒՆ 109

Հադրութ, 2019

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔ

«Սոցիոսկոպ» ՀԿ-ն հատուկ շնորհակալություն է հայտնում Ղարաբաղի[1] և Հայաստանի սահմանամերձ և ոչ սահմանամերձ համայնքներից հետազոտությանը մասնակցած բոլոր նրանց, ովքեր հնարավոր դարձրին հետազոտությունը՝ մեզ հաղորդելով պատերազմի և խաղաղության իրենց ըմբռնումները, կենսափորձը, հույզերն ու մտահոգությունները:

Շնորհակալ ենք մեր ընկերներին, որոնք մեծ հետաքրքրությամբ ներգրավվեցին այս նախագծի հետազոտական փուլում:

Շնորհակալ ենք նաև «Նորվեգիայի հելսինկյան կոմիտե»-ին՝ ի դեմս Լենե Վեթելանդի՝ երկար տարիների գործընկերության և ֆինանսական աջակցության համար:

1. Բնակավայրերի անունները նշելիս կիրառել ենք տեղացիների շրջանում տարածված ինքնանվանման ձևերը՝ առանց ներքաշվելու անվանող կամ դրանք վիճարկող քաղաքական օրակարգերում: Մեր այցելությունից ստացած տպավորության համաձայն՝ «Ղարաբաղի» դեպքում այն դեռևս տիրապետող ձևն էր, թեև վերջին տարիներին (առավելապես երիտասարդների շրջանում) տարածում է ստացել նաև «Արցախը»:

ԱՌԱՋԱԲԱՆ

Ամենավատ խաղաղությունը ամենալավ պատերազմից լավ է: Ո՞վ կուզի պատերազմ:

Հադրութցի տղամարդու հետ զրույցից

«Հետահայաց. ձայներ պատերազմի և խաղաղության մասին» *վերլուծությունը եռամյա հետազոտական աշխատանքի արդյունք է, որ նախաձեռնել էինք 2018 թ. աշնանը: Ռազմի հարցերի հանդեպ քննադատական-հետազոտական հետաքրքրությունը մեզ մղում էր բացահայտելու պատերազմի և խաղաղության մասին իրական և հասարակ ձայները, փորձառությունները և պատմությունները, որոնց սիրում են հղում անել այս կամ այն քաղաքական շահի սուբյեկտները՝ առանց դրանք լսելու, իրապես բացահայտելու, դրանց հաղորդակից լինելու:*

Պատերազմի, խաղաղության և իրավունքների փոխառնչության հարցը հայաստանյան և ղարաբաղյան հանրությունների համար նոր ներիմաստներ ստացավ 2018 թ. հեղափոխությունից հետո: Հեղափոխությունն՝ իբրև մեծ քաղաքական իրադարձություն, որ ներառել էր ժողովրդական լայն շերտերին և վերադարձրել նրանց փոփոխության իրականացման սուբյեկտի զգացումը, նոր սրություն և զգայունություն էր հաղորդել նաև ղարաբաղյան առկախված կոնֆլիկտին՝ նախ և առաջ ձևավորելով դրա հանգուցալուծման ակնկալիք:

Մասնավորապես այս տեսանկյունից պատերազմի, խաղաղության և իրավունքների փոխառնչությունների ըմբռնումների վերհանմանը զուգընթաց կարևոր էր ռազմականացման և անվտանգայնացման գաղափարաբանությունների և քաղաքականությունների քննությունը, որոնք գերակա դեր ունեն հանրային մտայնությունների և դիրքորոշումների շրջանակման վրա: Պատերազմը,

խաղաղությունը և իրավունքները ոչ միայն կենսափորձ են, այլև քաղաքական իշխանության ներքո ձևավորված գիտելիք:

Այսօր՝ Ղարաբաղյան 44-օրյա պատերազմի արհավիրքից և դրա բերած բազմաթիվ խնդիրներից հետո, մեզ համար՝ իբրև հետազոտողների, մեծ մարտահրավեր է ուսումնասիրության ուղենիշ դարձած հետազոտական հարցերի վերամտածումը: Դրանց պատշաճությունը հետպատերազմական դրությանը ինքնանդրադարձի և հարցադրման առարկա դարձավ անմիջապես. ինչպե՞ս ներկայացնել մարդկանց պատմությունները, փորձառությունները և դիրքորոշումները մի դրության մասին, որն անվանվում էր «ո՛չ պատերազմ, ո՛չ խաղաղություն». դրություն, որում պատերազմը առկախված էր, սպասելի, բայց դեռևս ոչ նյութեղեն:

Հետազոտությունը, որ երևան էր հանում ամենասովորական ձայները անհատական և հանրային կյանքը «հոսող պատերազմի» դրությանը հարմարեցրած մարդկային փորձառությունների մասին, դարձավ դրանց հետահայաց ամրագրումը և արխիվացումը: Այն չհասցրեց խթանել այս բարդ հարցերի շուրջ հանրային-քաղաքական զրույցներ և երկխոսություն:

Ղարաբաղյան երկրորդ պատերազմը խլեց հազարավոր կյանքեր, հանգեցրեց մարդու իրավունքների կոպիտ խախտումների, հումանիտար մեծ ճգնաժամի: Տարածաշրջանը, որտեղ երեսուն տարի խմորվում էր ղարաբաղյան կոնֆլիկտը, փոխվեց շրջադարձորեն. ռուսական խաղաղապահ ուժերի տեղակայումը, Թուրքիայի ուղղակի ներգրավվածությունը պատերազմում, Ադրբեջանում բռնապետական ռեժիմի խորացումը, տնտեսական ապաշրջափակման մասին ստորագրված հայտարարությունները փոխեցին տարածաշրջանում իրերի դրությունը և ուժերի հարաբերակցությունը: Այդուհանդերձ, ղարաբաղյան կոնֆլիկտն այսօր լիարժեքորեն հանգուցալուծված չէ, լուծված չէ նաև հարատև խաղաղության հարցը:

Պատերազմը և խաղաղությունն այսօր առավել, քան երբևէ վերամտածման անհրաժեշտություն ունեն. ի՞նչ է պատերազմը, ի՞նչ է խաղաղությունը, ի՞նչ է իրավունքը բոլոր նրանց համար, որոնց գիտելիքի և կենսափորձի վրա է հենված այս վերլուծությունը, իսկ ավելի լայն առումով՝ պատերազմի արհավիրքի միջով անցած ամբողջ հասարակության համար:

Այս և բազում այլ հարցեր այսօր օրակարգային են հանրային և քննադատական հասարակագիտության և հումանիտար մտքի համար: Վերջիններս պիտի կարողանան հաղթահարել իրենց հաճախակի կախյալությունը այս կամ այն նեղ քաղաքական շահից և ոչ թե նպաստեն քարոզչական կամ հակաքարոզչական գիտելիքի արտադրությանը, այլ իրենց հետազոտություններից և վերլուծություններից բխող գիտելիքը վերաշրջանակեն հանրային շահը առաջ մղելու համար:

Արփի Մանուսյան
փետրվար, 2021

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Երբ 2018 թ. ծրագրում էինք իրականացնել *«Հետահայաց. ձայներ պատերազմի և խաղաղության մասին»* հետազոտությունը, նպատակ ունեինք վեր հանելու այն լեզուն, որով Ղարաբաղի և Հայաստանի սահմանամերձ և ոչ սահմանամերձ համայնքների բնակիչները խոսում են պատերազմի և խաղաղության, Ադրբեջանի և ադրբեջանցիների հետ հարաբերությունների, ինչպես նաև պատերազմի և խաղաղության ու իրենց կյանքի և իրավունքների փոխառնչությունների մասին՝ այդ կերպ լսելի դարձնելով իրական և հասարակ ձայները:

Մեզ համար բարդ մարտահրավեր էր ձևակերպել պատերազմի, խաղաղության և իրավունքի հարցերն այնպես, որ դրանք սովորական և ծանրաշունչ սոցիոլոգիական տերմինաբանությունից զերծ ինչեին հատկապես նրանց համար, ովքեր ապրում են սահմանին մերձ՝ երբեմն կրակոցների ամենօրյա վտանգի ներքո: Սահմանամերձ համայնքներից բացի՝ նույն հարցերի շուրջ զրուցել ենք նաև Երևանին մոտ համայնքների բնակիչների հետ՝ բացահայտելու պատերազմի, խաղաղության և իրավունքի հարցերի շուրջ պատկերացումների այն առանձնահատկությունները, որոնք կարող են պայմանավորված լինել սահմանից հեռավորությամբ:

Ելնելով հետազոտության նպատակից՝ անդրադարձել ենք հետևյալ հետազոտական հարցերին.

> ***Ինչպե՞ս*** *են մարդիկ ընկալում պատերազմն ու խաղաղությունը, ինչպե՞ս են դրանք սահմանում:*
>
> ***Ինչպե՞ս*** *են մարդիկ սահմանում իրավունքի հարցը, ինչպե՞ս են փոխառնչվում պատերազմը և մարդկանց իրավունքները, պատերազմը և առօրյա կյանքը, պատերազմը և ապագայի ծրագրման հարցերը:*
>
> ***Ովքե՞ր,*** *ինչպիսի՞ ուժեր են շահում առկախված պատերազմի դրությունից, և ովքե՞ր են տուժում:*

Հետազոտական հարցերը դիտարկելով իբրև ուղենիշներ՝ իրականացրել ենք համայնքային փոքր հարցազրույցներ բարձր դասարանի պատանի աղջիկների և տղաների, երիտասարդ, միջին տարիքի և տարեց կանանց ու տղամարդկանց հետ: Հարցազրույցներ ենք անցկացրել նաև համայնքների քաղաքացիական և քաղաքական կյանքում առավել ակտիվ ներգրավվածություն ունեցող մարդկանց հետ:

Հետազոտության դաշտային աշխատանքներն իրականացվել են 2018-2020 թթ. ընթացքում երեք փուլով.

- 2018 թ. աշնանը (հոկտեմբեր) Նախիջևանին սահմանակից գյուղերում
- 2019 թ. աշնանը (հոկտեմբեր) Ղարաբաղի վեց քաղաքում
- 2020 թ. ձմռանը (հունվար) Երևանին մոտ քաղաքներում և գյուղերում

Այսպիսով՝ Հայաստանի սահմանամերձ համայնքներից հետազոտության համար ընտրվել են Արարատի և Վայոց ձորի մարզերը՝ համապատասխանաբար Երասխ, Արմաշ, Խաչիկ և Արենի գյուղերով: Հայաստանի ոչ սահմանամերձ համայնքներից ընտրվել են Կոտայքի, Արագածոտնի և Արմավիրի մարզերը՝ համապատասխա-

նաբար Հրազդան քաղաքով, Ուշի և Արշալույս գյուղերով: Ղարաբաղում հետազոտությունն իրականացվել է Ստեփանակերտ, Ասկերան, Շուշի, Մարտունի, Մարտակերտ, Հադրութ և Քելբաջար քաղաքներում: Որպես բնակիչների ընտրության չափանիշներ՝ առանձնացվել են սեռը և տարիքը: Հետազոտությանն ընդհանուր առմամբ մասնակցել է 104 մարդ:

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Համայնք	Սեռ	Տարիքային խումբ	Քանակ
Հայաստանի սահմանամերձ համայնքներ	Արական/ Իգական	14-18	4/4
		19-35	2/2
		36-50	3/2
		50-75	3/4
Հայաստանի ոչ սահմանամերձ համայնքներ	Արական/ Իգական	14-18	3/3
		19-35	2/3
		36-50	3/4
		50-75	3/3
Ղարաբաղ	Արական/ Իգական	14-18	6/6
		19-35	9/7
		36-50	6/7
		50-75	6/9
		Ընդամենը	**104**

ՀԵՏԱՁՈՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Ցանկացած հետազոտական գործընթաց ենթադրում է մարտահրավերներ, սահմանափակումներ և, իհարկե, պահանջում սոցիոլոգիական երևակայություն և քննադատական ինքնանդրադարձ՝ դրանք առերեսելու և հաղթահարման ուղիներ գտնելու համար:

Այդ մարտահրավերները և սահմանափակումները դառնում են հատկապես շոշափելի, իսկ հաղթահարման ուղիների փնտրտուքը՝ պահանջում շարունակական ջանք, երբ հետազոտությունն այնպիսի նուրբ հարցի շուրջ է, ինչպիսին պատերազմի և խաղաղության ըմբռնումն է առօրյայում՝ չավարտվող պատերազմի դրության մեջ: Հարցի նրբությունը պայմանավորում է նաև հետազոտական հայացքի նրբանկատությունը. լսելի դարձնել մարդկանց ձայներն ու մտահոգություններն այնպես, որ պարզորոշ լինեն դրանք պայմանավորող համատեքստը և գիտելիքը, բազմազան փորձառությունները և զգացմունքները:

Պատերազմի և խաղաղության մասին խոսելու բարդությունը առկախված պատերազմի համատեքստում՝ Ղարաբաղում, դրսևորվում էր զինվորականների և իրավապահ մարմինների ներկայացուցիչների կասկածամիտ հայացքներով և հետազոտության ու կազմակերպության գործունեության նպատակը մերթընդմերթ ճշգրտող հարցերով: Նման վիճակը ավելորդ անգամ լարվածություն էր մտցնում հետազոտության կազմակերպական աշխատանքներում, իսկ երբեմն ազդում մարդկանց՝ ազատ և անկաշկանդ արտահայտվելու հնարավորության վրա:

Թեև մեր զրուցակիցների գերակշիռ մասը հետազոտությանը մասնակցում էր պատրաստակամությամբ և անկեղծորեն պատմում մեզ իր դիրքորոշումներն ու մտահոգությունները, այնուամենայնիվ, շատերը, չնայած անանունությանը, հրաժարվում էին ձայնագրիչի առկայության պարագայում խոսելուց: Մի կողմից՝ սա մեր հետազոտական թիմի համար բարդություններ էր առաջ բերում տեղեկու-

թյան ամբողջականության պահպանման տեսանկյունից, մյուս կողմից՝ լրացուցիչ անգամ ակնբախ դարձնում պատերազմող երկրներին բնորոշ [ինքնա]գրաքննությունը անվտանգային և ռազմական ոլորտի առնչությամբ: Ավելին՝ մարդկանց կաշկանդվածությունն ավելի էր խորանում, երբ հետազոտական տեսանյութեր պատրաստելու համար հայցում էինք նրանց թույլտվությունը՝ խոսելու տեսախցիկի առջև: Մեծ մասամբ ստանալով նրանց մերժումը՝ մեր հետազոտական թիմը կորցրեց ամբողջական հետազոտական տեսանյութեր պատրաստելու հնարավորությունը Ղարաբաղում: Այս գործոնները, ահա, շրջանակել են պատերազմի և խաղաղության հարցերն ուսումնասիրելու մարտահրավերները և խոչընդոտները:

Հետազոտության մտահղացումը, նախագծումը, հասկացությունների ըմբռնումը, հարցերի մշակումը, տվյալների ստացումը և դրանց մեկնաբանումը անխուսափելիորեն ազդվել են մեր քաղաքական և գաղափարական հայացքներից: Սա լրացուցիչ ինքնանդրադարձի ջանքեր և լայնախոհություն է պահանջել տեղում իրականության հետ առնչվելու, մարդկանց փորձը, դիրքորոշումները բացահայտելու և դրանք հարգանքով ու համարժեքորեն արձանագրելու առումով:

Այսպիսով՝ աշխատանքը բաղկացած է առաջաբանից, երկու բաժիններից և հետգրությունից:

Առաջաբանը տեղայնացնում է հետազոտությունը և այս վերլուծական աշխատանքը այսօրվա՝ շրջադարձորեն փոխված համատեքստում՝ Ղարաբաղյան 44-օրյա պատերազմի արհավիրքից հետո երևան բերելով դրա արխիվային նշանակությունը ներկայի տեսանկյունից:

ԲԱԺԻՆ 1. Պատերազմի, խաղաղության և մարդու իրավունքների ըմբռնումները Ղարաբաղում հատվածում ներկայացնում ենք Ղարաբաղում առկախված պատերազմի և խաղաղության սպասման հակասական փոխառնչությունների, ղարաբաղյան կոնֆլիկտի և 2018 թ. հեղափոխության փորձընկալման, պատերազմի և ապագայի անորոշության, ինչպես նաև իրավունքի ընկալումների և սահմանումների առանձնահատկությունները:

ԲԱԺԻՆ 2. Պատերազմի, խաղաղության և մարդու իրավունքների ըմբռնումները Հայաստանի սահմանամերձ և ոչ սահմանամերձ համայնքներում հատվածում ներկայացնում ենք պատերազմի և խաղաղության, իրավունքների, դրանց պաշտպանության և զիջման հնարավորության հարցերը՝ դիտարկելով դրանք սահմանի և սահմանից հեռավորության համատեքստում: Աշխատանքը եզրափակում է ***Հետգրությունը,*** որ համառոտ ի մի է բերում հետազոտության առանցքային ասելիքը:

ԲԱԺԻՆ 1

ՊԱՏԵՐԱԶՄԻ, ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԸՄԲՌՈՒՄՆԵՐԸ ԴԱՐԱԲԱՂՈՒՄ

Մարտունի, 2019

1 1. ԱՌԿԱԽՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՍՊԱՍՈՒՄԸ

2019 թ. մեր հարցազրույցները Ղարաբաղի բնակիչների հետ պատերազմի և խաղաղության, ադրբեջանցիների և Ադրբեջանի հետ հարաբերությունների, պատերազմի հարուցած խնդիրների և իրենց իրավունքների մասին երևան բերեցին պատերազմի և խաղաղության տարբեր փորձառություններ ու ըմբռնումներ: Հարցազրույցները տեղի էին ունենում մի համատեքստում, որում թեև պատերազմն իր պայմանական իմաստով առկա չէր, սակայն ներկա էր իր առօրեականության մեջ՝ հաճախակի հնչող կրակոցներով, զոհված զինծառայողների և սահմանում միջադեպերի մասին լուրերով, պատերազմի տեսանելի հետևանքներով և սոցիալ-տնտեսական բազմաթիվ խնդիրներով, ռազմական ոլորտի գերակայությամբ և գրեթե ամենուր ապաստարանների առկայությամբ: Պատերազմի մասին խոսելը որքան բարդ, նույնքան էլ սովորական էր Ղարաբաղում ապրողների համար: Այդ խոսակցության սովորականությունն ամրապնդված է պատերազմ[ներ] տեսնելու, դրանք պարբերաբար վերապրելու, պատերազմի ազդեցությունները շարունակաբար կրելու հանգամանքներով և պատերազմով պայմանավորված առօրյան կազմակերպելու առանձնահատկություններով[1]: Մարդկանց հետ զրույցները երևան են բերում 2016 թ. ապրիլյան թեժացման հետևանքով անհատական և հանրային կյանքերը վերստին պատերազմական դրությանը հարմարեցնելու հանգամանքը:

Ապրիլյան իրադարձություններից հետո պատերազմը հետնապլանից առաջ մղվեց հրատապի և այսօրեականի դաշտ: Հետևաբար այս համատեքստում շատ մարդկանց համար պատերազմի մասին խոսել նախ և առաջ նշանակում է խոսել սեփական կյանքի, ընտանիքի, զրկանքների, կորուստների և վա-

1. Մանուսյան, Ա. Պատերազմներ և խաղաղություններ. առկախված անորոշություն. *socioscope.am*. վերցվել է՝ http://socioscope.am/archives/1900

խերի մասին: Մի կողմից՝ պատերազմն ըմբռնվում է իր քաղաքական և պատմական հետևախորքերով՝ անցյալի երկայնքով, մյուս կողմից՝ դրա շարունակական ներկայությունը առօրյայում ապապատմականացնում է վերջինիս և տեղայնացնում ընթացիկ հոգսերի և ապրումների, բարեկեցության և անելիքները ծրագրելու դժվարության կամ անհնարինության՝ ապագայի համատեքստում[2]:

Սոցիալ-տնտեսական անհավասարությունները, աղքատությունը, ռազմական ոլորտի գերակայությունը հանրային կյանքի այլ ոլորտների հանդեպ, հաճախ չգիտակցված և նաև դրա հետևանքով չպաշտպանվող իրավունքները էապես կապված էին ինչպես Ղարաբաղյան առաջին, այնպես էլ 2016 թ. ապրիլյան սրացման և սպասվող նոր պատերազմի շշուկային քննարկումներով: Առկախված պատերազմը ձևակերպվում էր որպես մարդկանց ապագան անորոշությամբ պարուրող և անհատական ու հանրային-քաղաքական, սոցիալ-տնտեսական զարգացումը խոչընդոտող առանցքային հանգամանք: Այդ համատեքստում փխրուն խաղաղությունը հնարավորինս երկար պահելու և այն վերջնականապես հաստատելու մարդկանց ձգտումը պարբերաբար երևան էին գալիս մեր զրույցներում, սակայն խաղաղության ցանկությունը և դրան հասնելու ուղիները պատկերվում էին ամենատարբեր եղանակներով և դիրքորոշումներով՝ ակնբախ դարձնելով ինչպես Ղարաբաղյան պատերազմի շուրջ հանրային դիրքորոշումների, պատկերացումների և զգացմունքների բազմազանությունը, այնպես էլ դրանք պայմանավորող օրինաչափությունները և կաղապարները:

Խաղաղության հաստատման հանրային ըմբռնումները տատանվում էին առասպելական արդարության մասին պատկերացումներից (չարի և բարու պայքար) մինչև realpolitik (երկկողմանի զիջումներ): Այս տարաշերտ և հակասական պատկերացումներն ազդված են մի շարք գործոններից. թե՛ քաղաքական [մտա]կառուցվածքները, թե՛ վերջին տարիների ռազմահայրենասիրական պաթետիկ քարոզչությունն իր «ազգ-բանակ» հայեցակարգով, թե՛ անհատական փորձառությունները և մարդկային պատմությունները շրջանակում են խաղաղության հանրային ձգտումը և դրան հասնելու «թույլատրելի» եղանակները: Միաժամանակ, եթե մարդիկ պատերազմական փորձառությունն ու առօրեականությունն ավելի դյուրին էին ձևակերպում, ապա նրանցից շատ ավելի մեծ ջանք էին պահանջում խաղաղության (թեկուզ իբրև բաղձալի ու հաճախ անհասանելի) գաղափարի շուրջ մտածելը և այն բառերով արտահայտելը: Խաղաղության մասին զրույցն ուղեկցվում էր խզումներով, քանի որ պատերազմի առօրեականության պայմաններում հաստատուն խաղաղությունը հաճախ թվում էր անհավանական և չէր մտածվում: Այս պայմաններում պատերազմը տարրալուծվում էր և ձուլվում խաղաղության գաղափարին, իսկ առօրյա հարաբերական անդորրը՝ ձևակերպվում իբրև *«խաղաղություն»*, երբ *«կրակոցներ չկան»*, քանի դեռ *«թուրքը չի հարձակվել»*[3]: Այսպիսի խաղաղությունը, սակայն, անհրաժեշտաբար չէր ենթադրում Ադրբեջանի կամ ադրբեջանցի ժողովրդի հետ «հարևանություն» անելու հեռանկար նույնիսկ այն պարագայում, երբ մտածվում էր սահման չունենալու, սահմանը հաղթահարելու հնարավորությունը: Հետաքրքրական է, որ ավելի ավագ սերունդը, որ Խորհրդային Միության տարիներին ադրբեջանցիների հետ փոխհարաբերություններ է ունեցել, երբեմնի հարաբերությունները վերականգնելու քիչ վստահություն ուներ՝ անկախ հետազոտության իրականացման ժամանակ հնարավոր համարվող խաղաղության հաստատումից: Այս սերնդի մարդկանց մեջ վառ էին ինչպես Ղարաբաղյան առաջին պատերազմի, այնպես էլ 2016 թ. ապրիլյան սրացման հիշողությունները, նրանց մի մասը պատերազմ[ների] մասնակից էր, իսկ մյուս մասը կորցրել էր տուն, ընտանիքի անդամներ, հարազատներ և ընկերներ: Ցավոտ կենսափորձը, ուրեմն, մշուշում էր հնարավոր հարաբերությունների պատկերացումը. խաղաղություն առանց հարաբերությունների: Թերևս այսպես կարող ենք բնորոշել խաղաղության ձգտող Ղարաբաղի բնակիչների՝ հարևանների հետ մի տարածաշրջանում խաղաղ ապրելու պատկերացումը:

2. Նույն տեղում

3. Նույն տեղում

Մարդկանց հետ զրույցներում 2019 թ. առկա և դրանց նախորդող տարիների դրությունը թերևս ամենահաճախն անվանվում էր *«ո՛չ պատերազմ, ո՛չ խաղաղություն»*՝ դրանով նկատի ունենալով հարցի անորոշ առկախվածությունը, լայնածավալ գործողությունների բացակայությունը, միաժամանակ դրանց վերսկսման շարունակական վտանգը: Այս նույն բնութագրիչներով նկարագրվող դրությունը բնորոշվում էր նաև իբրև *«հոսող պատերազմ»*, *«սառը պատերազմ»*, *«հանգիստ պատերազմ»*, *«պատերազմի ժամանակավոր ավարտ»*, որն *«ավելի վատ է, քան պատերազմը»* (իհարկե, նման ըմբռնումներն էապես փոխված կլինեն 44-օրյա սաստիկ պատերազմից և դրա բերած բազմաթիվ աղետներից հետո):

Միաժամանակ մարդկանց առօրեական պատկերացումներում և կենսափորձում իր ուրույն տեղն ուներ գլոբալ ռազմատենչ քաղաքականությունների ուժի և իշխանության գիտակցումը, որոնք, ինչպես կարծում էին նրանք, շրջանակում էին թե՛ աշխարհի դրությունը, թե՛ մեր տարածաշրջանի և թե՛ ղարաբաղյան կոնֆլիկտը: Ուստի խաղաղության հանրային ձգտումը նվազ կարևոր հանգամանք էր դառնում գլոբալ ուժերի քաղաքականությունների և մտադրությունների հետնախորքում: Ավելին՝ խաղաղության հանրային ձգտումը, ինչպես նշում էին շատերը, բնորոշ էր նաև Ադրբեջանի հասարակությանը՝ *«սահմանից այն կողմ ապրող մարդիկ էլ մեզ պես խաղաղություն են ուզում, քանի որ նրանք էլ անընդհատ զոհեր են ունենում»*: Այս մտայնությունը երևան էր գալիս անգամ 44-օրյա պատերազմի ընթացքում լրագրողական տարբեր ռեպորտաժներում[4]: Պատերազմի անմիջական ազդեցությունները և արհավիրքը լավագույնս իմացող և փորձառող մարդիկ, չնայած գրեթե մոռացված բարիդրացիական հարաբերություններին և շարունակական կորուստներին ու ցավին, պատկերացնում էին դրանք վերապրող սովորական ադրբեջանցիների զգացմունքները: Այդուհանդերձ, Ադրբեջանի ռազմատենչ ղեկավարության հռետորաբանությունը, ինչպես նշում էին մարդիկ, ստվերում էր խաղաղության եզրեր գտնելու հնարավորությունը: Դպրոցահասակ պատանիներն իրենց հասուն քաղաքական դիրքորոշումներում ներկայացնում էին պատերազմն իբրև *«պետությունների կռիվ»*, որտեղ *«ժողովուրդները դեր չունեն»*, իսկ փոխադարձ զիջումները՝ իբրև ղարաբաղյան հարցի լուծման միակ հնարավոր եղանակ, որ պայմաններ կստեղծի հասարակությունների շփման, փոխադարձ վստահության ձևավորման և վախի վերացման համար: Այդուհանդերձ, փորձի և տարբեր պատմությունների համադրությունները պատանիների մի մասին ստիպում էին լինել ավելի զգուշավոր և կասկածամիտ՝ ադրբեջանցիների կամ, ինչպես հաճախ իրենք էին ասում, թուրքերի հետ համերաշխ ապրելու առնչությամբ, քանի որ *«խաղաղ ապրելու ժամանակ էլ նրանք հանկարծակի հարձակվում են ու պատերազմ սկսում»*: Միաժամանակ պատանեկան հետաքրքրասիրությունը երբեմն գլուխ էր բարձրացնում՝ հնարավորություն տալով մտածելու ադրբեջանցի տարեկիցների հետ շփվելու, պատերազմի մասին նրանց կարծիքները լսելու մասին: Սակայն փոխադարձ զիջումների հարցին ավելի մանրամասն անդրադառնալիս ակնհայտ էր դառնում գործնականում դրա իրականացման աղոտ պատկերացումը: «Իսկ ի՞նչ պետք է զիջենք մենք» հարցի պատասխանը մնում էր օդում կախված: Գործնականում փոխզիջման քաղաքականության հանրային աղոտ ըմբռնումներն արտացոլում են այն կարևոր հանգամանքը, որ տարիներ շարունակ ղարաբաղյան կոնֆլիկտի բովանդակությունը, հատկապես դրա բանակցային ասպեկտը, հասու չի եղել հանրության լայն շերտերին: Մեծ իմաստով՝ ղարաբաղյան կոնֆլիկտն իր պատմական, քաղաքական և սոցիալ-տնտեսական հետնախորքով, ազդեցություններով և հետևանքով քաղաքական «էլիտայի» սեփականությունն է եղել: Այս համատեքստում, որքան էլ փոխզիջումների մասին խոսակցությունները տարիներ ի վեր ֆորմալ քաղաքական դիսկուրսի մաս են եղել, անգամ 2018 թ. հեղափոխությունից հետո չեն վերաճել հանրային քննարկումների և գիտելիքի՝ իրական բովանդակությամբ:

4. Azatutyun.am. (2020, նոյեմբեր). *Կոթիգյուղցի 80-ամյա տատիկն ադրբեջաներենով խաղաղության կոչ է անում*. վերցվել է՝ https://www.azatutyun.am/a/30930000.html. | Azatutyun.am. (2020, նոյեմբեր 9). Տե՛ս նաև *Գյումրեցիները խաղաղություն են ուզում*. վերցվել է՝ https://bit.ly/3eagSjG. | Azatutyun.am. (2020, նոյեմբեր 8). *Խաղաղ պայմաններում սպիներ ստացած Կոթի գյուղի 63-ամյա բնակիչը խաղաղություն է երազում*. վերցվել է՝ https://www.azatutyun.am/a/30936972.html

Չնայած խաղաղությունը մտածելու բարդություններին՝ մարդիկ փորձում էին այն սահմանել և երազել, ուրվագծել դրան հասնելու հնարավոր եղանակներ: Եթե փոխզիջումներով խաղաղության հասնելու գործնական ուղին մշուշոտ էր, իսկ հանրության խաղաղության ցանկությունը՝ միամիտ և անօգուտ ձեռնարկ գլոբալ քաղաքականությունների և շահերի, պատերազմի բիզնեսի համատեքստում, ապա վերջինիս *«կռվով ու պայքարով»* հաստատումը թվում էր առավել կենսագործելի: Որքան էլ հեգնական, իսկ այսօրվա հայացքից արդեն ցավոտ կարող է հնչել, սակայն այդ եղանակներից մեկը կրկին պատերազմելն էր՝ պատերազմով խաղաղության համար պայքարելը. այսպես մարդկանց կողմից ձևակերպվում է խաղաղության հաստատման տեսանկյունից ընդունելի, «արդարացի» պատերազմի գաղափարը: Խաղաղության և պատերազմի բարդ ու հակասական մտածումներում, այնուամենայնիվ, պատերազմը հաճախ փորձառվում էր ուղիղ դասակարգային չափման մեջ. այն ոչ թե ժողովուրդների, այլ *«մեծամեծների»* կամ *«կառավարությունների»* կռիվն ու թշնամանքն է, որի մեջ սովորական մարդիկ ձայնի կամ որոշման ուժից զրկված են:

Իհարկե, պատերազմով խաղաղության ամրագրման բանաձևը շրջանցում էր հավանական պարտությունը, և պարտությունն առերեսելը բարդ էր և անպատկերացնելի ինչպես 2019 թ. մեր հետազոտության ժամանակ, այնպես էլ հիմա՝ արդեն Ղարաբաղյան 44-օրյա ծանր պատերազմի պարտությունից հետո: Հատկանշական է, որ հետազոտությունը բացահայտեց խաղաղության հոգնակիությունը՝ բազմերես խաղաղություն*ները:* Եթե որևէ կերպ հնարավոր է աստիճանակարգել խաղաղության մարդկային ըմբռնումներն ու փորձառումները, ապա թերևս ամենանշանակալի խաղաղությունը *դիրքերի* խաղաղությունն էր: Հենց վերջինս էլ սահմանվում էր իբրև «իսկական» խաղաղություն:

Ղարաբաղի կարգավիճակի անորոշությունը ևս նրանց կարծիքով պայմանավորում էր «ո՛չ պատերազմ, ո՛չ խաղաղություն» դրությունը. գալիք պատերազմի վտանգը կարող էր կանխվել, ինչպես նշում էին մեր զրուցակիցները, Ղարաբաղի անկախության կամ Հայաստանին միանալու պարագայում: Երրորդ կողմի միջամտության անհրաժեշտությունը կամ անխուսափելիությունը ևս դառնում էր քննարկման առանցք. հատկապես տարեց մարդկանց համար խաղաղության հաստատման ընդունելի միջոց էր ռուսական խաղաղապահ ուժերի տեղակայումը, ռուսական վերահսկողությունը, իսկ երիտասարդներն իրենց բացահայտ ընդդիմությունն էին ցուցադրում այդ սցենարի հանդեպ՝ չհարցադրվող պատրաստակամությունը հայտնելով Ղարաբաղի սահմանները պաշտպանելուն և խաղաղության հաստատման իրագործողը դառնալուն:

Երկու տասնամյակից ավելի առկախված ղարաբաղյան կոնֆլիկտը և խաղաղության հաստատման ոչ շոշափելի ջանքերն ու առավել ևս բացակա արդյունքները մարդկանց շարունակաբար պահում էին երրորդ երկրի միջամտության անհրաժեշտության մտորումների դաշտում: Ձգձգվող «ո՛չ պատերազմ, ո՛չ խաղաղություն»-ից ազատվելու, հակամարտության վերջակետը դնելու (սառեցնելու) հրատապությունը երբեմն հանգեցնում էր սեփական գործորդությունից և ինքնիշխանությունից իսպառ հրաժարվելու հուսահատ մոտեցման[5]:

5. Ղարաբաղյան երկրորդ պատերազմի առաջին օրերին Հայաստանի ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանն իր պաշտոնական ֆեյսբուքյան էջում խաղաղապահների տեղակայման մասին արեց մի գրառում, որն առաջ բերեց հանրային մեծ ոգևորություն: Սեպտեմբերի 29-ին, տեղադրելով լայն տարածում գտած հրետանավոր տղայի՝ Ալբերտ Հովհաննիսյանի նկարը, Միրզոյանը գրում է. «Մեր խաղաղապահն էլ ա ինքը, անկախապահն էլ, հայրենապահն էլ: Հիմա էդ ա»: Միրզոյան Ա. (2020, սեպտեմբեր 30), *Մեր խաղաղապահն էլ ա ինքը, անկախապահն էլ, հայրենապահն էլ*. Facebook. վերցվել է՝ https://bit.ly/2P4rl7W. Հոկտեմբերի 3-ին՝ «Ալ Ջազիրա»-ին տված հարցազրույցի ժամանակ, վարչապետ Նիկոլ Փաշինյանն ասում է, որ խաղաղապահների տեղակայման հարցը կարող է քննարկվել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության շրջանակում.primeministerամ. (2020, հոկտեմբեր 3). *ՀՂ խնդիրը չունի այլ լուծում, քան խաղաղ լուծումը, և ագրեսիային դիմակայելը դե ֆակտո կապացուցի դա*. վերցվել է՝ https://bit.ly/3x5adA8. Այս հայտարարությունն առաջ բերեց ներքին և արտաքին տարբեր արձագանքներ: Ռուսական մեդիան շահարկեց այն՝ պնդելով, թե Փաշինյանը դեմ է ռուսական խաղաղապահների տեղակայմանը: Արդեն հոկտեմբերի 22-ին «Ինտերֆաքսին» տված հարցազրույցի ժամանակ Փաշինյանն ասում է, որ Հայաստանի համար ընդունելի է ռուսական խաղաղապահների տեղակայումը. primeministerամ. (2020, հոկտեմբեր 22). *Մեր նպատակն է, որ միջազգային հանրությունը ճանաչի ԼՂ-ի անկախությունը*. վերցվել է՝ https://bit.ly/3n4T70E. Այս մի քանի օրինակներով, ահա, տեսնում ենք, թե ինչպես գործնականում պատերազմի սաստկացմանը զուգընթաց փոխվեց խաղաղապահների մասին հռետորաբանությունը:

1 2. ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԿՈՆՖԼԻԿՏԸ ԵՎ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԸՆԿԱԼՈՒԸ

Ղարաբաղի տարբեր շրջաններում տարբեր էին նաև մարդկանց՝ Հայաստանում տեղի ունեցած հեղափոխության ընկալումները հատկապես Ադրբեջանի և Հայաստանի միջև հարաբերությունների տեսանկյունից: Երբեք չբացառելով հանկարծահաս պատերազմի հավանականությունը՝ նրանք լիահույս էին, որ Հայաստանում տեղի ունեցած հեղափոխությունը թույլ կտա քաղաքակիրթ և խաղաղ ճանապարհով լուծել Ղարաբաղի հարցը: Այդուհանդերձ, կնճռոտ հարցի խաղաղ լուծման ցանկությունը զրույցների ընթացքում չէր ստանում գործնականում դրա իրականացման հարցի պատասխանը՝ ևս մեկ անգամ ցույց տալով թե՛ այն մեծ խզումը, որ առկա է ղարաբաղյան կոնֆլիկտի դիվանագիտական հանգրվանի և հանրության տեղեկացվածության միջև, թե՛ հանրային ընկալումների հակասականության ողջ ներկապնակը: Հարցի լուծման եղանակների շուրջ քննարկումներն ավելի հրատապ էին դարձել Ղարաբաղում 2018 թ. հեղափոխությունից հետո: Ինչպես ցույց են տվել մեր հետազոտությունները, նախկին իշխանությունների հետ փոխկապված ուժերը՝ թե՛ Ղարաբաղում, թե՛ Հայաստանում, հեղափոխությունն առավելապես ներկայացնում էին իբրև երկիրն ապակայունացնող և պատերազմի վերսկսման վտանգով հղի գործընթաց: Ղարաբաղյան սահմանափակ ընդդիմադիր և ազատ ձայներով լրատվական-տեղեկատվական դաշտը հաջողել էր հեղափոխության առնչությամբ տագնապային հանրային տրամադրություններ ստեղծել նաև այն պատճառով, որ տարիներ շարունակ ղարաբաղյան և հայաստանյան նախկին իշխանությունների, նրանց պատկանող լրատվամիջոցների, նրանցից սնուցվող բլոգերների, նրանց գործակից քաղտեխնոլոգների ջանքերով պատերազմի և հակառակորդի անընդհատ ներկայության հետնախորքում ձևավորել են վախի, [ինքնա]գրաքննության, հանրային քննադատությունների լռեցման և ճնշման մթնոլորտ: Ռազմահայրենասիրական պաթետիկ քաղաքականությունների հետևում թաքնված՝ խաղաղ ճանապարհով երկարամյա կոնֆլիկտի լուծումը հանրությանը ներկայացվում էր իբրև դավաճանական՝ «հող հանձնելու» արարք, իբրև կառավարող ուժի և անձամբ Նիկոլ Փաշինյանի նպատակադրություն: Ինչպես ցույց տվեց ժամանակը, այս հյուսված թակարդում հայտնվեցին նաև կառավարող ուժը և Նիկոլ Փաշինյանը, որ չկարողացավ հանրության հետ խոսել իրերի դրության մասին, չնայած հասարակություններին խաղաղության նախապատրաստելու իր հայտարարություններին՝ դառնալով ռազմահայրենասիրական պաթետիկ հռետորաբանության և քաղաքականության իրական գործադրողը:

Մեր հետազոտությունները ցույց են տալիս, որ «հողեր հանձնելու» դրույթը Ղարաբաղում քննարկվում էր ժողովրդի կամքի տեսանկյունից, իսկ ղարաբաղյան հարցի կարգավորման շուրջ ռազմական հռետորաբանությունը (Դավիթ Տոնոյանի հայտնի հայտարարությունը՝ նոր պատերազմ, նոր տարածքներ, Նիկոլ Փաշինյանի հայտնի հայտարարությունը՝ Արցախը Հայաստան է և վե՛րջ), Իլհամ Ալիևին ուղղված «խրոխտ» ուղերձները հեշտությամբ առաջ էին բերում հանրային համակրանք, ոգևորություն և նաև վստահություն քաղաքական գործչի հանդեպ: Արդեն պատերազմի պարտությունից հետո այս հռետորաբանությունը քննադատվեց նաև դրա երբեմնի համակիրների կողմից՝ ցույց տալով պատերազմի լեզվով հանրային համակրանք ձեռք բերելու, հանրահաճո պոպուլիզմի և իրական կարողությունների արատավորությունը:

1 3. ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՊԱԳԱՅԻ ՀԱՐՑԵՐԸ

Պատերազմը նաև առօրյա է: Սա էր, թերևս, ղարաբաղյան մեր հարցազրույցների ամենաակնհայտ և միաժամանակ հանրային-քաղաքական քննարկումներում գրեթե լուսանցք մղված պատերազմի բազմաթիվ երեսներից մեկը: Այսօր՝ արդեն 44-օրյա ծանր պատերազմից հետո, պատերազմական առօրյան իր բազմաթիվ խնդիրներով նոր խորությամբ և սրությամբ է կանգնած մեր առջև թե՛ իբրև հանրության, թե՛ իբրև պետության: Այդ առօրյայի՝ լուսանցքից հանրային քննարկումների, վերլուծությունների և քաղաքականությունների առանցք բերելը հրատապ քաղաքական հարց է. ինչպե՞ս է Ղարաբաղյան երկրորդ պատերազմն իր աղետալի հետևանքներով շարունակում ազդել մարդկանց առօրյայի և ապագայի վրա՝ չդառնալով երեք տասնամյակ առկախված կոնֆլիկտի բաղձալի վերջակետը:

Այս համատեքստում 2019 թ. ապագայի շուրջ մտավախությունների ձայները, ցավոք, ոչ միայն շարունակում են մնալ այսօրեական, այլև նոր մարտահրավերներով սաստկացած: Թաթուլ Հակոբյանը Ղարաբաղյան առաջին պատերազմին նվիրված իր «Կանաչ և սև. ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» գրքում գրում է. «Պատերազմը մտել է Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի գրեթե յուրաքանչյուր բնակավայր, այս կամ այն ձևով՝ գրեթե ամեն տուն»[6]: Արդեն այսօր՝ 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո, կարող ենք ասել, որ պատերազմն իրավամբ մտել է յուրաքանչյուրի տուն և միայն երկարամյա ջանքերի ու ցավի վերապրման միջոցով կարող է դուրս գալ տներից:

Եթե սպասվող պատերազմը դիտարկվում էր իբրև խաղաղության հաստատման համար մղվող պայքար, որ կորոշարկի թե՛ Ղարաբաղի կարգավիճակի հարցը, թե՛ մարդկանց կյանքն ու անելիքը, ապա այժմ չհանգուցալուծված կոնֆլիկտն իր հետ բերել է նոր անորոշություններ և հարցեր: Թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք, պատերազմի իրենց անմիջական փորձից ելնելով, ձևակերպում էին պատերազմական դրությանը հարմարեցված, բայց ապագայի անորոշությամբ պայմանավորված մտահոգությունները՝ մնալու-արտագաղթելու, նոր բիզնես ձեռնարկել-չձեռնարկելու, տուն կառուցել-չկառուցելու, երեխա ունենալ-չունենալու, ստեղծելու-սպասելու երկընտրանքներում: Պատանի աղջիկների ու տղաների՝ դեռևս նոր սկսվող հասուն կյանքն արդեն լի էր պատերազմներ վերապրած հասուն տարիքի մարդկանց այս երկընտրանքներով և մտահոգություններով:

Մի կողմից՝ պատերազմի սպասումն ու դրանից վախը, այդ վախն ամեն կերպ թաքցնելու միտումը, իսկ մյուս կողմից՝ արտագաղթելու մտքերը և միաժամանակ Ղարաբաղում կյանքը շարունակելու ցանկությունը շրջանակում էին պատերազմի սպասման սովորականության պայմաններում առօրյան կազմակերպելու հնարավորությունները: Պատերազմի սպասումով, բայց խաղաղության ակնկալիքով. այսպես կարելի է բնորոշել Ղարաբաղի բնակիչների առօրյա մտածումների շրջանակը:

Սակայն այս երկընտրանքային հարցերը ոչ միայն չեն լուծվել նոր պատերազմով, այլև նոր կերպարանք են ստացել և առաջնաբեմ բերել մի կարևոր հարց. ինչպե՞ս ամոքել կորուստը, ցավն ու վիշտը՝ հանրային համերաշխության եզրերը վերագտնելու համար:

Սպասվող պատերազմի մասին խոսակցություններում ոչ միայն բացակայում էր պարտությունն ընդհանուր առմամբ, այլև առանձին շրջանների բնակիչներ, օրինակ՝ Քելբաջարի և Ծուշիի բնակիչները, զգում էին սեփական քաղաքի պաշտպանվածությունն ու անվտանգությունը, նշում, որ ապրում են ոչ սահմանամերձ համայնքներին բնորոշ կենսակերպով: Այս կերպ նույնիսկ պատերազմներ տեսած և պատերազմի սպասող հանրությունները մեծ մասամբ մերժում են պատերազմի արհավիրքի իրական ծավալները, հատկապես, երբ

6. Հակոբյան, Թ. (2011). *Կանաչ և սև. ոչ պատերազմ, ոչ խաղաղություն*. Երևան. Անտարես, 9:

տարիներ շարունակ գործի է դրվում հակառակորդի ուժերն ու կարողությունները նսեմացնող քարոզչություն՝ համեմված սեփական ուժերն ու կարողությունները գերագնահատող քարոզչական հնարներով: Պատերազմի պարտությունից հետո՝ քաղաքը լքելուց առաջ, Քարվաճառի բնակիչներն այրում էին սեփական տները[7]. հուսալքության, կորստի և ցասումի այս պատմությունները դեռ երկար կուղեկցեն մեզ՝ դառնալով կործանարար պատերազմի հերթական արտեֆակտ:

Պատերազմի մասին զրույցները բացահայտում էին մարդկանց՝ շահի, զենքի համաշխարհային բիզնեսի և դասակարգերի փոխկապվածության մասին խորքային պատկերացումները: Բանվոր դասակարգի ինքնությամբ հանրային լայն շերտերի ներկայացուցիչները հստակ էին իրենց ձևակերպումներում. պատերազմից շահում են «մեծամեծները»՝ Ադրբեջանի իշխանությունները, զենք արտադրող գերտերությունները, պատերազմի թալանից հարստացած տեղի և Հայաստանի բարձրաստիճան պաշտոնյաները, իսկ տուժում՝ հասարակ մարդիկ՝ հարստահարվող բանվոր դասակարգը և զինվորները: Մեր որոշ զրույցներում իբրև պատերազմից տուժողներ շրջանակվում էր նաև Ադրբեջանի հասարակությունը, որը ևս «զոհեր է տալիս և գործիք է սեփական իշխանությունների ձեռքին»:

7. *Քարվաճառի բնակիչներն այրում են իրենց տները*. (2020, նոյեմբեր 13). a1plus.am. Վերցվել է՝ https://a1plus.am/hy/article/385342:

Շուշի, 2019

Ի՞ՆՉ Է ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ[8]

Խաղաղությունն այն կլիներ, որ երկու հատ вышка դրած լիներ, ուղղակի զինվորները հսկեին, ոչ թե խրամատից գլուխը հենց հանեն, կրակեն: ***Հադրութ, 35-50 տ. տղամարդ***

Խաղաղությունը... Որ մեզ անկախ զգանք. կա՛մ Հայաստան լինի, կա՛մ Արցախ լինի, ու ես առավոտ չարթնանամ ու մտածեմ, որ կռիվ կարող է լինել: ***Հադրութ, 35-50 տ. կին***

Խաղաղությունը... Չլինեն, օրինակ, դիրքեր կամ լինեն, բայց ոչ հիմիկվա նման: Սահմանը բաց լինի, ու մենք իմանանք, որ թշնամի չունենք: Բայց ինձ թվում է, որ այդպես չի լինի, անհնարին բան եմ ասում: ***Քելբաջար, 14-18 տ. աղջիկ***

Որ պատերազմ չլինի, որ էստեղ աշխատեմ, հանգիստ լինեմ, որ վաղը-մյուս օրը իմ ընտանիքը էստեղից հանելու կարիք չլինի: ***Ստեփանակերտ, 19-34 տ. տղամարդ***

Գյուղերում, քաղաքներում ապրողների համար գուցեև խաղաղ է, կրակոց չի լսվում, բայց դիրքերի խաղաղությունն է իսկական խաղաղություն: ***Ստեփանակերտ, 14-18 տ. տղա***

Խաղաղությունը... Որ մեր զավակները, կոնկրետ չեմ ասում մեր՝ Քելբաջարի շրջանում, այլ Հայաստանի ամբողջ երեխաները անվնաս գան: ***Քելբաջար, 50-75 տ. կին***

Խաղաղությունը՝ մեծ հարստություն, հպարտություն: Մենք տեսել ենք կռիվը, էլ չենք ուզում: Կռվի դաշտում միշտ մտածում ես, որ ոչ թե քեզ, ընկերոջդ չխփեն, որ դու засада-ի մեջ չընկնես, ամենասարսափելի բանն է դա: Խաղաղության համար էսօր էնքան ենք ուրախանում, հպարտանում: Խաղաղությունը ամենամեծ հարստությունն է: Չեմ կարա թարգմանեմ, թե խաղաղությունն ինչ է: Մեջս փշաքաղվում է էդ բառը լսելուց: Մարդը որ տեսած է լինում, իրա համար ավելի մեծ բան է: ***Քելբաջար, 35-50 տ. տղամարդ***

[Խաղաղությունը] երևի ճանաչումն է՝ քաղաքական ստատուսը, անկախությունը՝ առանց մի կտոր հող հանձնելու: Չնայած «խաղաղությունը» լայն հասկացություն է: Մեկի համար դա պատերազմի բացակայությունն է, մյուսի համար զարգանալու հնարավորությունն է: Հիմա մերը [Ղարաբաղում ապրող մարդկանց] պատերազմի բացակայությունն է: Ասում ենք՝ պատերազմ չլինի, լավ է: Հիմա էս, ինչ որ ունենք, խաղաղությո՞ւն է, թե չէ: Այո՛, պատերազմ չկա, խաղաղ ապրում ենք: Բայց մեզ մոտ ո՛չ խաղաղություն է, ո՛չ պատերազմ: Խաղաղ ապրելը միայն փորս կուշտ լինելը չի: Խաղաղ ապրելն էն է, որ ես մտածեմ, որ էդ ամեն ինչը չպիտի լինի: Բայց մարդիկ չեն մտածում սահմանի մասին ամեն օր: Երբ որ դեպք է լինում՝ վայ, դրանց էսը, էնը, էդ ժամանակ են մենակ մտածում սահմանի մասին կամ եթե ծառայող մարդ ունեն: ***Շուշի, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ, 35-50 տ. կին***

---

8. Հարցազրույցներից մեջբերումներ անելիս փորձել ենք հավատարիմ մնալ հարցվողների ձևակերպումներին՝ հնարավորինս խուսափելով լեզվական խմբագրումից:

Հրազդան,
փետրվար, 2020

Ի՞ՆՉ Է ՊԱՏԵՐԱԶՄԸ

Մենք չենք կարող պատերազմը նկարագրել, բնութագրել, քանի որ ղեկավարությունն է որոշում՝ պատերազմ կլինի, թե չի լինի: Դա մի հատ բիզնես է, կոնկրետ որտեղ զենքը վերջանում է, մի հատ պատերազմ են անում, որ սաղ զենքերն էլ [իրացնեն]... Այս ամենը բիզնես է, պատերազմն էլ է բիզնես: ***Քելբաջար, 19-34 տ. տղամարդ***

Ասելու բա՞ն է, որ ասեմ: Շատ վախենալու բան է: Այնպիսի բաներ եմ տեսել, որ պետք չէ ասեմ: Շատ վտանգավոր բան է, ավելի լավ է, որ չտեսնենք էլ պատերազմ: Այն, ինչ տեսել ենք, մեզ հերիք է: Էնքան ընկերներ ենք կորցրել: ***Հադրութ, 35-50 տ. տղամարդ***

Կրակոցներ միշտ էլ լինում են: Պատերազմը այն է, որ արդեն ոչ թե սահմանին, այլ քաղաքի վրա կրակոցներ լինեն: ***Մարտակերտ, 14-18 տ. տղա***

Պատերազմը սարսափ է յուրաքանչյուր մարդու համար: Ով անմիջապես տեսել է, նա հոգով, մարմնով դողում է էդ բառից: Պատերազմը սարսափ է, ո՛նց թարգմանեմ: ***Քելբաջար, 35-50 տ. տղամարդ***

Ոնց ասեմ, մի բառով չի լինի նկարագրել: Էն, որ մինչև հիմա վախը մեջդ է, մինչև հիմա քանի տարի է անցել, երազիս տեսնում եմ: Վարչակազմի շենքի տակի նկուղներ էինք վազում, մեր շենքը դրա վերևն է, էդ կրակոցների տակով, հիշում եմ, ոնց էր մամաս փոքր եղբորս գրկած վազում: Մենք էլ, որ երեխաներ էինք, չէինք հասկանում՝ էդ ինչ է, դուրս էինք գալիս, շոթյոց-ներ էինք հաշվում, Աղդամից երևում էր: Չգիտեմ: Կարող է շատ փոքր էի էդ ժամանակ, էդքան վախ չէինք զգում, բայց որ մեծացա, արդեն ահավոր էր: ***Ասկերան, 35-50 տ. կին***

Պատերազմը այն է, որ հարձակվում են, ամբողջ ժողովուրդը խառնվում է իրար, տեղափոխություններ են լինում...Դաժան բան է պատերազմը: ***Հադրութ, 14-18 տ. աղջիկ***

Պատերազմը շատ ահավոր է, շատ զարհուրելի է: Մենք տեսել ենք պատերազմը, արհավիրքները. չեմ ուզում, մենք տեսել ենք դա: Ես ժամանակին չեմ զգացել էդ վախը, բայց ապրիլյանի ժամանակ զգացել եմ: 1992 թ. չեմ զգացել, թեկուզ էլի շատ զոհեր ենք տվել, դժվար ենք ապրել, բայց ապրիլյանը ավելի ահավոր էր, ավելի դաժան էր, շատ: Չորս օրում ինչքան զոհ տվեցինք: ***Մարտունի, 50 -75 տ. կին***

[Պատերազմը] մահ է, կորուստ: ***Քելբաջար, 35-50 տ. կին***

Պատերազմը արյուն է: Հիմա չկա [պատերազմ], բայց կարող է քիչ հետո զանգեն, ասեն, որ մեկի վրա կրակել են: Չգիտես՝ հաջորդ պահին ինչ կլինի, կարող է հենց հիմա էլ այդ պատերազմը լինի: ***Հադրութ, 19-34 տ. տղամարդ***

ՊԱՏՐԱ՞ՍՏ ԵՆ ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ

Պարզ է, որ իրենք էլ են խաղաղություն ուզում: Ապրիլյանի ժամանակ հեռուստացույցով ցույց էին տալիս, որ իրենց մայրերն էլ էին մտահոգ իրենց երեխաների համար: Էս ամեն ինչն անողը իրենց իշխանությունն ա: Իրենք էլ են մեզ նման մարդիկ, բայց պատերազմ են անում: ***Շուշի, 19-35 տ. կին***

Ես կարծում եմ, որ Ադրբեջանում ապրող մարդիկ մեզ նման հասարակ մարդիկ են, ինչ ապրումներ որ մենք ունենք, նույնն էլ՝ իրենք. ընտանիք ունեն, ծնողներ ունեն: Ուղղակի էստեղ պետությունների համաձայնությունն է, եթե համերաշխ լինեն... Բոլորն էլ ցանկանում են... Ինձ չի թվում, որ եթե Ադրբեջանը մեր թշնամի պետությունն է, ապա նրանք այլ կերպ են մտածում: Նրանք նույնպես ընտանիք ունեն, նույնպես ցանկանում են լավը, համերաշխություն, խաղաղություն: ***Հադրութ, 19-35 տ. կին***

Դե կան, էնտեղ էլ կան մարդիկ, որ չեն ուզում պատերազմ, իրենց զավակներն էլ են [զոհվում]: Ինչքան պետք է քար լինեն, որ ասեն՝ հա, ջահանդամ, թող Ղարաբաղը տան, իմ տղեն զոհվի: Չեմ կարծում: Նույն մայրերը, համենայն դեպս, չեն ուզենա: ***Քելբաջար, 50 -75 տ. կին***

Երևի կուզեն, որ խաղաղություն լինի: Բնակչությունը ցանկանում է, որ խաղաղություն լինի, քանի որ իրենք էլ են տուժում: Բայց դե կառավարությունն է հրահանգում: ***Շուշի, 14-18 տ. աղջիկ***

Ես Ադրբեջանի ժողովրդի հետ շատ եմ շփվել: Իրանք շուտ ենթարկվող են: Եթե Ալիևը, իրենց вертушка-ն ասի՝ էս բանը սենց եք անում, հազիվ մի քանի հոգի բողոքի: Բայց մեծամասնությունը, միևնույնն է, կողմ կլինի, որ խաղաղություն լինի: Որովհետև ամենավատ խաղաղությունը ամենալավ պատերազմից լավ ա: Ո՞վ կուզի պատերազմ: ***Հադրութ, 50 -75 տ. տղամարդ***

Բայց իրենք [ադրբեջանցիները] էլ են մեզ նման մարդ, իրենք էլ են մեզ նման ուզում խաղաղություն: Ամեն մարդ չէ, որ ուզում է պատերազմ լինի: Ուղղակի ուրիշների մեղքերի համար իրենք են պատասխան տալիս: ***Մարտունի, 14-18 տ. աղջիկ***

Ապրիլյան պատերազմի ժամանակ նրանք [ադրբեջանցիները] էին ասում, որ պետք է հեռացնել Ալիևին, որ խաղաղություն լինի: ***Ասկերան, 50 -75 տ. տղամարդ***

Չգիտեմ, դժվար հարցեր եք տալիս, որովհետև վաղվա օրը երբեք չես իմանա, թե ինչ կլինի: Տարիներ հետո միգուցե նորից համատեղ ապրեն, նորից լավ լինեն, բայց չեմ կարծում, որ էսքան կռիվը... Մարդկանց մեջ մնացել է: Հեշտ չէ, էլի, ինչքան երեխեք կորցրինք, ինչքան ջահելներ կորցրինք, գնացին: Էդ հլը մենակ ջահելները, բա մեծե՞րը: ***Քելբաջար, 35-50 տ. կին***

Մարտունի, 2019

ՀՆԱՐԱՎՈ՞Ր Է ՆՈՐԻՑ ՇՓՎԵԼ ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԻ ՀԵՏ

Այս իրավիճակում՝ ո՛չ: Պետք ա երևի մի սերունդ փոխվի, որ այս ամենը իրենց վրա ազդեցություն չթողնի: Օրինակ՝ իմ ընկերոջ հայրն է մահացել կռվի ժամանակ, ինքը շփվել չի կարող: Ղարաբաղում այդպիսի ընտանիք չկա, որ ինչ-որ բարեկամ, հարազատ, տուժած չլինի: Չեն կարող այդ մտքի հետ հարմարվեն: ***Մարտակերտ, 19-35 տ. տղամարդ***

Ես իրանց էլ, Թուրքիային էլ թշնամի եմ համարում: Ցեղասպանությունը նորմալ մարդը չի կարա անի՝ տենց գազանավարի բան: Էրդողանը, ես հաշվում եմ, որ երևի մի հատ սատանա է: ***Հադրութ, 35-50 տ. կին***

Ուղղակի կշփվեմ հետը [ադրբեջանցի հասակակցի]: Կհարցնեմ՝ ինքը ի՞նչ է մտածում մեր մասին, ի՞նչ կարծիք ունի, ճի՞շտ է համարում այս պատերազմը, այս վիճակը: Հետո մնացածը: ***Հադրութ, 14-18 տ. տղա***

....Սկի էն ժամանակ չենք շփվել, հիմա ի՞նչ պիտի շփվենք: Սումգայիթի կոտորածից հետո էլ ի՞նչ: ***Հադրութ, 50-75 տ. կին***

Չգիտեմ՝ դիմացս որ ադրբեջանցի կանգնած լինի, ինչ կանեմ, երևի ոչ մի բան էլ չեմ անի: Եթե առիթ չտա, ոչ մի բան էլ չեմ անի: Հարաբերությունները միշտ էլ լարված են լինելու, նույնն էլ իրենց մոտ է: ...Բայց ամեն ինչ կանեմ, որ կռիվ անեմ հետները, որովհետև իրենց պատճառով է, որ մեր զինվորների հետ կապված ամեն օր մի վատ դեպք ենք լսում: Իրենք այդ ազգի ներկայացուցիչն են: Մենք չենք սահմանին լարված իրավիճակ ստեղծում, էդ իրենք են լարված իրավիճակ ստեղծում: Մենք կարող ենք իրենց մասին վատը մտածենք, բայց իրենք չեն կարող: ***Մարտունի, 14-18 տ. տղա***

Չէ՛, ընդհանրապես չէ՛: Դրանց հետ ի՞նչ շփում: Թուրքի հետ ի՞նչ շփում: Ես դեմ կլինեմ: Էսքանից հետո ի՞նչ շփում. ծնող ենք կորցրել, քույր, եղբայր, ես չեմ պատկերացնում: Պետք լինի՝ կարանք էլի գնանք կռվենք, ես ինքս էլ կգնամ, բայց որ շփում լինի: ...Մեկ-մեկ Ռուսաստանից որ բարեկամ է գալիս, ասում է՝ հարևան ունենք, թուրք է, նենց լավ մարդ է: Ես վեր եմ կենում, գնում եմ սեղանից, որ կռիվ չանեմ: ***Ասկերան, 35-50 տ. կին***

Հա՛, ես չեմ ուզում պատերազմ, բայց ինչպե՞ս երկխոսեմ նրա հետ, ով կրակում ա ինձ վրա: Էս ա, որ արցախցիները չեն ընկալում: Եվ մի ուրիշ բան էլ կա, որ էն կողմում էլ կան մեր նման մարդիկ, որ խաղաղություն են ուզում: Երբ խոսացնում ես ավագ սերնդին, ասում են, որ իրենք ժամանակին ապրել են ադրբեջանցիների հետ, լավ հարևանություն են արել և այլն: Որ մի քիչ խորանում ես, հասկանում ես, որ հա՛, կարող է իրանց մեջ էդ դիսկուրսը տեղի ունենա: Բայց քանի որ ակնհայտ կամ խորապես չի քարոզվում էս դիսկուրսը, ու սահմանի վրա էլ կրակում են, էս դիսկուրսը տեղ չի հասնում: Ներքին ցանկություն [խաղա-

ղության] բոլորն էլ ունեն, իհարկե: ***Ստեփանակերտ, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ, 35-50 տ. կին***

Դե մի ժամանակ, որ իրար հետ ապրել ենք, տեսել ենք էլի իրանց վերաբերմունքը, ու ինձ թվում ա՝ դա չի փոխվել, ինչքան էլ սերունդը փոխվի: Միևնույնն ա, իրանց մտածելակերպը նույնն ա մնալու: ***Շուշի, 19-35 տ. կին***

Ոչ մի ժամանակ բարեկամ չենք կարա լինենք Ադրբեջանի հետ: Հնարավոր չի դա: Ո՞նց կարաս մեկի հետ բարեկամ լինես, որ գիտես՝ քո հարազատին սպանել ա ինքը: Լրիվ թողել ենք, դուրս ենք եկել Մարտակերտից: Մի շոր ենք վերցրել ու դուրս եկել: Ո՞նց կարաս դրա հետ բարեկամ լինես: Թուրքը, ադրբեջանցին լրիվ նույնն են: Դրանց հետ բարեկամությունը ես նորմալ չեմ գտնում: ***Շուշի, 35-50 տ. կին***

Ասկերան, 2019

ԻՆՉՊԵ՞Ս ՊԻՏԻ ԼՈՒԾՎԻ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑԸ

Դե, հուսով ենք, որ մի օր Արցախը կդառնա ինքնուրույն պետություն, ոչ մեկից կախվածություն չի ունենա, և տարբերություն չեն(ք) դնի Հայաստանի հայերի և Արցախի հայերի միջև: ***Շուշի, 14-18 տ. աղջիկ***

Մոտ ապագայում չեմ պատկերացնում, որ լուծվի: Ոնց կար, այնպես էլ մնում է: Քանի տարի է՝ այդ նույն հարցի շուրջ անընդհատ խոսում են: ...Անկախ պետություն լինի, մենք մեր գործերով լինենք: Այսքան մարդիկ զոհվել են, այսքան արյուն է թափվել: Մեկը ասում է՝ այս հողերը պետք է տան, մյուսը ասում է՝ բայց ինչի՞ պետք է տան: Կռվով պահած, այնքան մարդ արյուն են թափել, ինչի՞ պետք է տան: ***Մարտակերտ, 35-50 տ. տղամարդ***

Բակոն [Սահակյան] չի որոշողը Ղարաբաղի հարցը, Հայաստանն է որոշողը: Մենք, ճիշտ է, աշխարհին ցույց ենք տալիս, որ Ղարաբաղը առանձին պետություն է, Հայաստանը՝ առանձին: Բայց Հայաստանին է պատկանում Ղարաբաղը, եթե չպատկաներ, Հայաստանի երեխեքը ի՞նչ գործ ունեին ստեղ ծառայեին: Մենք աշխարհին ենք ցույց տալիս, որ առանձին պետություն է, պետք է անկախանա ու մտնի կամ Հայաստանի կազմի մեջ, կամ որին ուզում է: Ինքը իրականում պետք է մտնի Հայաստանի կազմի մեջ: ***Քելբաջար, 35-50 տ. տղամարդ***

Էստեղ որպեսզի հաստատ խաղաղություն լինի, ռուսական զորքերը պիտի մտնեն: Իմ հասկանալով՝ մենակ էդ դեպքում կլինի: Մեջտեղում պիտի մարդ լինի: Թուրքը նենց ազգ է, որ միևնույնն ա, վստահել չի լինի: Սուտ է, եթե ասես՝ իրենց պայմանագրին հավատաս: 1994 թ. ստորագրել ենք զինադադարը, էդ հո չէ՞ր պարտադրում՝ կրակեին: Բայց էս տարիների ընթացքում ինչքան տղաներ են զոհվել: ***Ստեփանակերտ, 19-34 տ. տղամարդ***

[Ղարաբաղում մարդիկ մտածում են] ոչ մի թիզ հող չենք տալիս, ստիպում ենք Պուտինին կամ չգիտեմ ում, որ Ղարաբաղը ճանաչեն անկախ, ու դա պետք է էս 10 օրվա մեջ անենք: Մենք, երբ ասում ենք կոմպրոմիս, հասկանում ենք միայն հողերը, այսինքն՝ մեր պարտությունն ենք տեսնում այդտեղ, ու դա ընդունելի չէ մեզ համար: Այսինքն՝ ոչ ոք չի բացատրում մարդկանց, թե դրա փոխարեն ինչ է լինելու: ***Շուշի, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ, 35-50 տ. կին***

Ես կցանկանայի, որ Արցախը միանար Հայաստանին: Ինքը մենակ ոչ մի բան չի կարա անի, աղքատիկ քաղաք է՝ պատերազմից հետո ավերված: Ժողովրդի մեջ վախ կա: Նայում ես [ժողովրդի] աչքերին, ոնց որ վախով քնեն, վախով ելնեն: Գոնե Հայաստանն իր պահպանիչն է, կարողանում է ինչ-որ հարցեր լուծել: ***Քելբաջար, 50-75 տ. կին***

Հաճախ ենք լսում, որ ժողովուրդն ասում է՝ ա դե, բարիշենք, գնանք, էլի, նրանք էլ են մարդ, նրանք էլ չեն ուզում կռվել, մենք էլ չենք ուզում կռվել: Էստեղ էլ, ամեն տեղ էլ Ղարաբաղում ասում են՝ առաջ ոնց էինք ապրում, գնում էինք, գալիս էինք, ամեն ինչ նորմալ էր: Բարիշենք գնա, էստեղ էլ զարգանա, էլի: Հա, ինչ ա լինելու, կգնանք էնտեղից առևտուր կանենք, իրենք կգան էստեղից առևտուր կանեն, նորմալ, ոնց որ մնացած պետու-

թյունները: Հիմա Ռուսաստանը գերմանացիների հետ կռվել է Սովետական Միության ժամանակ, հիմա նորմալ առևտուր է գնում: Ուզում եմ ասել, մի օր էդ գալու է, բայց լավ կլինի, որ շուտ գա: Ուղղակի, եթե էստեղ գնա արդեն հող հանձնելու խնդիրը, մենք հող չունենք հանձնելու, որովհետև մենք դեռ Ուտիք ունենք Տիգրան Մեծի օրոք մնացած: Եթե խոսքը գնաց հող հանձնելու մասին, մենք հլը պիտի գրավենք հող, ոչ թե հանձնենք: Իսկ բարիշելը հնարավոր է միայն էն դեպքում, երբ Ադրբեջանի տոտալիտար ռեժիմը քայքայվի: Իրենք իրենց իշխանությունը միայն պահում են ժողովրդին այ էս պատերազմով սարսափեցնելու միջոցով: Եթե էնտեղ ժողովրդավարություն գա, ես վստահ եմ, որ էդ հարցը կլուծվի ավելի շուտ: ***Հադրութ, 35-50 տ. տղամարդ***

Կամ պիտի Արցախը որպես Արցախ ճանաչեն, ու մենք ապրենք, չվախենանք, որ էլի կսկսեն կրակել, մենք պետք է երեխաներին վերցնենք, подвал իջնենք, կամ Հայաստանին խնդրենք, որ գոնե տուն տվեք՝ մեր երեխաներին պահենք: Կամ Արցախը պետք է ճանաչեն ու սահմանը դնեն որպես սահման, ոչ թե որպես զինվորական տարածք, կամ մեզ պետք է վերցնեն որպես Հայաստան: ***Հադրութ, 35-50 տ. կին***

Ավագ սերնդի ու երիտասարդների մոտեցումներն էլ են տարբեր: Եթե ավագ սերունդը մտածում է, որ սահմանին ուրիշ երկրի զորքեր կարող են կանգնել, օրինակ՝ Ռուսաստանի, ապա երիտասարդները դա չեն պատկերացնում, որովհետև իրենց համար սա իրենց երկիրն ա, իրենցից բացի ոչ մեկ չպիտի պաշտպանի իրենց հողը: ***Ստեփանակերտ, 19-35 տ. տղամարդ***

Չպետք է ասեն՝ Հայաստան-Արցախ: Մենք մի Հայաստան ենք, չպիտի առանձնացնենք: Մենք պիտի պահենք մեր հողերը, մնացածն էլ հետ բերենք: ***Շուշի, 35-50 տ. կին***

Քարվաճառ, 2019

ԻՆՉՊԵ՞Ս Է ԱՌԿԱԽՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄՆ ԱԶԴՈՒՄ ՄԱՐԴԿԱՆՑ ԿՅԱՆՔԻ ՎՐԱ

Քույրս ուզում է ամուսնանա, և իրենք ուզում են տուն կառուցեն հենց այստեղ՝ Քելբաջարում: Նրան ընդհանրապես չի անհանգստացնում, որ այնտեղ լարված է, մենք չենք մտածում, որ ամեն րոպե կարող է կռիվ ու պատերազմ լինի: Մի քիչ հանգստություն կա այդ առումով: ***Քելբաջար, 14-18 տ. աղջիկ***

Շատ են սարքում շենքեր, տներ: Ապրում են էսօրվա օրով: Չեն մտածում՝ պատերազմ կլինի, չսարքենք: ***Հադրութ, 19-35 տ. կին***

Իհարկե, եթե ուզում ես մի հատ տուն առնես, մտածում ես՝ ստեղ ո՞նց առնեմ, ես ո՞նց էդ ֆինանսը ներդնեմ էն մասում, որ թուրքը կարող է վերցնել կամ եթե չվերցնի էլ, կրակի, ոչնչացնի: Կանե՞ս տենց բան, չէ՞: Բոլոր ղարաբաղցիներն էլ տենց են մտածում: ***Հադրութ, 35-50 տ. կին***

Օրինակ՝ 10 հազար ծախսելու փոխարեն 5000 եմ ծախսում: 5000 դրամը պահում եմ, որ եթե վաղը պատերազմ լինի, կարողանամ գոնե բենզին լցնեմ, երեխաներիս տանեմ: ***Ասկերան, 35-50 տ. տղամարդ***

Մարդիկ ապրում են, հո չե՞ն նստելու սպասեն, որ հեսա կռիվը սկսվելու է: Իրենք իրենց կյանքը շարունակելու են: Էնպես չի, որ էստեղ ժողովուրդը ամբողջ օրը պատերազմի մասին է մտածում, իրենք իրենց կյանքն ապրում են: Ուղղակի բոլորս էլ հասկանում ենք, որ մի օր նորից լինելու է: ***Ստեփանակերտ, 19-35 տ. տղամարդ***

Ես կարող եմ չորս երեխա ունենամ, բայց երկուսն եմ ունենում, որովհետև չորսին էստեղ չեմ կարա մեծացնեմ, ու եթե կռիվ լինի, էդ երկուսին կարամ վերցնեմ գնամ, ես չեմ կարա չորս երեխա վերցնեմ, գնամ Հայաստան կամ Ռուսաստան՝ մեկի տուն: ***Հադրութ, 35-50 տ. կին***

Սա խաղաղություն չի, այստեղ վախենում ենք՝ մի գործ սկսենք, մի բիզնես դնենք, թեկուզ տուն սարքենք: Որովհետև ասում ենք՝ կռվի գոտի է, չգիտես վաղը մյուս օր կռիվ կլինի, թե ոչ: Դրա համար էլ այս տեղին ուշադրություն չեն դարձնում, գործարաններ չեն սարքում, պարզ է, որ բնակչության կեսը ուրիշ տեղերում է աշխատանք փնտրելու: ***Մարտունի, 19-34 տ. կին***

Ամեն օր դու անորոշ վիճակում ես. էսօր կհարձակվեն, գիշերը կհարձակվեն, վաղը կհարձակվեն: Գնում ես, երկու ապրանք ես պարտքով վերցնում, չես իմանում՝ կհասցնե՞ս ծախես: Ամեն րոպե էդ անորոշ վիճակը քեզ սպանում ա: Մարդիկ լրիվ սթրես տարած, լրիվ վախեցած... Մի բան անում են, ասում են՝ չգիտենք կհասցնենք վայելենք, թե չէ: Էդ անորոշ վիճակը մարդկանց սպանում ա: Ինչ-որ ձևով էդ հարցը լուծվի, հոգիդ հանգստանա,

իմանաս, որ սա քոնն ա, քո վրա ոչ մեկ չի հարձակվի: Իսկ հիմա շատ վատ ա: ***Հադրութ, 50-75 տ. կին***

Եթե մարդը վաղվա օրը չգիտի՝ ոնց ա լուսանալու, էդ կյանք չի: Մեկը пылесос ա միացնում, մտածում ես, թե... Էդ ձայնն ա մեր ականջին: Վտանգն ա մեր ականջին: Մեր մեծերը, մեր արտաքին գործերի նախարարությունը, Ադրբեջանի արտաքին գործերի նախարարությունը հեսա էլի հանդիպում են: Սրտատրոփ սպասում ենք, թե թազա ինչ են խոսելու: ***Հադրութ, 50-75 տ. տղամարդ***

Մեր համայնքը իր հունով ապրում է: Ոնց եղել է, էդպես էլ գնում է, ուղղակի մարդկանց քանակը նվազել է: Առաջ մեր դպրոցում սովորում էր մոտ 700 աշակերտ, հիմա՝ 400: ***Մարտակերտ, 14-18 տ. աղջիկ***

Երևանում գտնվողը մտածում է միայն իր գործի մասին: Այստեղի բնակիչները մտածում են և՛ գործի, և՛ այն մասին, թե սահմանում ինչ կլինի: Ուզում ես ներդրում անես, մի բան սարքես, բայց թողնում ես, մինչև հարցը կլուծվի, հետո: ***Մարտակերտ, 35-50 տ. տղամարդ***

Բոլորն առավոտյան, ինչպես միշտ, գնում են իրենց աշխատանքին, իրենց դասերին: Ոչ մի իրավիճակ էլ չի ազդում, որովհետև ամեն մարդ ապրում է իր համար, իր հացի փողը պիտի աշխատի: ***Մարտակերտ, 14-18 տ. աղջիկ***

Ո՛չ խաղաղություն է, ո՛չ պատերազմ է. անորոշ վիճակ է: Դրա համար մարդիկ հիմնականում ստեղ վախենում են փող դնեն, ինչ-որ գործ անեն, որովհետև կարող է չվայելեն, փակում-գնում են: ***Հադրութ, 50-75 տ. տղամարդ***

Մեկ է, կյանքը շարունակվում է: Եթե մտածեմ, որ մի օր պատերազմ է սկսվելու... Կարող է էդ օրը հինգ տարի հետո լինի: հինգ տարի նստեմ մտածե՞մ: Մեկ է, կյանքը շարունակվում է: ***Ստեփանակերտ, 19-35 տ. տղամարդ***

Հիմնականում բոլորը պատերազմների ժամանակ, երբ որ ինչ-որ դեպքեր են պատահում, գալիս են էստեղ [Շուշի], իսկ էստեղի բնակիչները հպարտանում են, որ իրենք գտնվում են սահմանից հեռու: Մարդկանց համար ավելի ապահով ա կյանքը: ***Շուշի, 19-35 տ. կին***

Շուշի, 2019

1.4. ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

Իրավունքի հարցը Ղարաբաղում տատանվում էր դրա կենցաղային պատկերացումից մինչև քաղաքական չափում՝ իրավունքի աղոտ (չ)ձևակերպումների գերակշռությամբ: Իրավունքների ընկալման սպեկտրում եթե դպրոցահասակ պատանիները կարևորում էին կրթական, ինքնարտահայտման, ժամանցի, զարգացման իրավունքները (ձևակերպելով դրանք ավելի շատ որպես պայմաններ), ապա մեծահասակների մեկնաբանություններում իրավունքը հանգում էր սոցիալ-տնտեսական և հանրային-քաղաքական հարցերին: Պատերազմական դրությունը, անվտանգային քաղաքականությունները, սոցիալ-տնտեսական վատթար դրությունը, իրավունքի բարոյականացված պատկերացումը շրջանակում էին դրա՝ հաճախ իբրև անտեղի և վտանգավոր հարցի ընկալումը: Ներքին խնդիրները չբարձրաձայնելու, իսկ բարձրաձայնողներին իբրև թշնամու ջրաղացին ջուր լցնողների պիտակելու քաղաքականություններն իրենց ազդեցությունն էին թողել իրավունքի այսպիսի պատկերացումների վրա: Չհանգուցալուծված պատերազմն այն արգելակն էր, որ խոչընդոտում էր մարդկանց՝ ներքին խնդիրների բարձրաձայնումը և սրում ինքնագրաքննությունը՝ արտաքին աշխարհին և հատկապես Ադրբեջանին սեփական խնդիրները չցուցադրելու համար: Թեև իրավունքի սահմանումները և ձևակերպումները աղոտ էին, իսկ դրանց ոտնահարումների մասին բարձրաձայնումները՝ հազվադեպ, հստակ էր դրանց պաշտպանության կարևորությունը. իրավունքները զիջելը կամ դրանցից հրաժարվելը հատկապես տղամարդիկ թուլություն էին դիտարկում: Այնուամենայնիվ, զրույցների ընթացքում ակնբախ էր դառնում նաև իրավունքի պաշտպանության ֆորմալ կարևորման հանգամանքը, իսկ գործնականում այս կամ այն իրավունքից հրաժարվելն առավել տարածված փորձառություն էր: Այս հանգամանքը մեծապես կախված էր իրավունքի բարոյականացված պատկերացումներով, որոնք հատկապես ազդում էին աղջիկների և կանանց վրա: Ժամանցի վայրեր հաճախելը ձևակերպելով իբրև իրավունքի հարց՝ պատանի աղջիկները ցածրաձայն նեղսրտում էին այն սահմանափակումներից, որոնց բախվում էին, ինչպես, օրինակ, միայն տղամարդկանց հավաքատեղի դարձած հանրային վայրեր այցելելուց:

Միաժամանակ սեփական իրավունքները չպաշտպանելու, դրանցից որոշակի պայմաններում հրաժարվելու, դրանք զիջելու հանգամանքները, բացի վերը թվարկված քաղաքական և մշակութային համատեքստից և գործոններից, պայմանավորված էին նաև սոցիալական վիճակով կամ, ինչպես իրենք էին իրենց անվանում, «բանվոր դասակարգի» չպաշտպանվածությամբ:

Չկիրառելով «իրավունք» հասկացությունը՝ մարդիկ զրույցների ընթացքում ձևակերպում էին իրավունքի առանցքը՝ խաղաղության և ազատ ապրելու կենսական իրավունքը: Իհարկե, իրավունքի մասին նրանց պատկերացումները պայմանավորված էին անհատական փորձառությունով, բայց *խաղաղության և ազատության իրավունքը* կարմիր թելի նման անցնում էր գրեթե բոլոր զրույցներում: Հետևաբար Ղարաբաղի հարցի լուծումը վճռական նշանակություն ուներ նաև խաղաղության և ազատության պայմաններում ապրելու իրենց իրավունքի վերականգնման տեսանկյունից: Ղարաբաղյան առաջին, ինչպես նաև 2016 թ. ապրիլյան կարճատև պատերազմը խաթարել էր մարդկանց կյանքի բնականոն հունը՝ զրկելով նրանց խաղաղ ապրելու, աշխատելու, սովորելու իրավունքից: Այս տեսանկյունից Ղարաբաղի հարցն իրավամբ դեռևս 2019 թ. աշնան առկախված պատերազմի համատեքստում միայն ինքնորոշման կամ տարածքային հարց չէր. խաղաղության ցանկությունը ձևակերպվում էր իբրև *խաղաղության իրավունք* և արժանապատիվ կյանքի իրավունք, չարտագաղթելու և Ղարաբաղում մնալու իրավունք: Խաղաղության իրավունքի համատեքստում առանձնահատուկ ձևակերպում և նշանակություն ուներ *կյանքի ու ապրելու իրավունքը*, որ դարձել էր ամենօրյա մտածման առարկա. ինչպե՞ս ապրել կյանքը մահվան վտանգի, կորստի, անորոշության պայմաններում, ինչպե՞ս պլանավորել յուրաքանչյուր հաջորդ օրը: Չնայած իրավունքի նման գոյացական ըմբռնումներին՝ վերջինիս շուրջ քննարկումները մեծ մասամբ երևան էին բերում դրա կենցաղային ակունքը՝ այն կապելով և նույ-

նացնելով սոցիալական խնդիրների հետ: Իրավունքը կապվում էր քաղաքներում ու գյուղերում առկա հանգստության, մաքրության, ճանապարհների լուսավորվածության, գողությունների բացակայության, առօրյան կազմակերպելու ու հանգիստ ապրելու հնարավորության հետ: Միաժամանակ տնտեսական խնդիրների առկայությունը՝ սահմանափակ ներդրումները, աշխատատեղերի սակավությունը, ցածր աշխատավարձերը և վատթար աշխատանքային պայմանները, ձևակերպվում էին արժանապատիվ աշխատանք ունենալու իրավունքի տեսանկյունից: Աշխատանքի իրավունքի կարևորության գիտակցման հետ մեկտեղ Ղարաբաղում մարդիկ բախվում էին սահմանափակումների՝ ոչ միայն սոցիալական խնդիրներով, այլև գենդերային խտրականության դրսևորումներով պայմանավորված: Աշխատանքի իրավունքի ազատության հարցում խտրական վերաբերմունքի հիմնականում արժանանում են երիտասարդ աղջիկները, որոնք, իրենց սեռով, տարիքով կամ աշխատավայրի հեռավորության գործոնով պայմանավորված, հաճախ ստիպված էին լինում հրաժարվել այս կամ այն աշխատանքից՝ ենթարկվելով ինչպես միջավայրի ճնշումների, այնպես էլ ինքնասահմանափակումների:

Հայաստանում 2018 թ. գարնանը տեղի ունեցած հեղափոխության ոչ նյութական փորձառումը, Ղարաբաղում հանրային «մթնոլորտի փոփոխությունը»՝ կարծիքների ավելի ազատ արտահայտումը, վախի և կաշկանդվածության նվազումը, իրենց էական դերն էին խաղացել իրավունքի՝ քաղաքական ասպեկտի ըմբռնման վրա: Մթնոլորտի փոփոխության համատեքստում մարդիկ կարևորում էին ոչ միայն սեփական կարծիքի ազատ արտահայտումը, այլև գործելու, պայքարելու ազատությունը տեղում քաղաքական փոփոխությունների սկզբնավորման համար: Հայաստանյան հեղափոխությամբ պայմանավորված ընդվզման փորձ էին Ստեփանակերտի կենտրոնական՝ Ազատամարտիկների պողոտայում 2018 թ. հունիսի առաջին օրերին տեղի ունեցած բողոքի ցույցերն ընդդեմ նախկին ԱԱԾ պետի, ԱԱԾ պետի տեղակալի և ոստիկանապետի: Բողոքի ցույցերին նախորդել էր ԱԱԾ աշխատակիցների կողմից քաղաքացիների դաժան ծեծը: Ծեծկռտուքի մասնակիցներից մեկը ուժային կառույցի ղեկավարի որդի էր, որը դեպքի վայր էր կանչել ԱԱԾ հատուկ նշանակության աշխատակիցներին՝ հաշվեհարդար տեսնելու վիճաբանության մեջ ներգրավված մյուս երիտասարդների հետ:

Տասնյակ տարիների ընթացքում ղարաբաղյան և հայաստանյան նախկին իշխանությունների, նրանց պատկանող լրատվամիջոցների, նրանցից սնուցվող բլոգերների, նրանց գործակից քաղտեխնոլոգների կողմից պատերազմի և հակառակորդի անընդհատ ներկայության հետևախորքում ձևավորված վախի մթնոլորտը, սոցիալ-քաղաքական հարցերի և հանրության ձայնի լռեցումն ու ճնշումը, ուժային կառույցների գերիշխանությունը, գեներալների և ուժային կառույցների ներկայացուցիչների կողմից անպատիժ մնացած բազմաթիվ հանցագործությունները[9] և անպատժելիության մեջ վստահությունը թերևս հանգամանքներից մի քանիսն էին, որպեսզի ԱԱԾ տասնյակ աշխատակիցներ՝ ծառայողական համազգեստներով, ծեծեին երկու քաղաքացիների[10]: Ավելին՝ ծեծի ողջ ընթացքին ականատես էին քաղաքացիներ և ոստիկաններ, որոնք չէին միջամտել՝ հավանաբար վախենալով: Արդեն նույն օրը երեկոյան տասնյակ քաղաքացիներ փակել էին Ստեփանակերտի ավտոկայանի հարակից կենտրոնական փողոցը՝ պահանջելով ԱԱԾ պետի, ԱԱԾ պետի տեղակալի և ոստիկանապետի հրաժարականները: Հաջորդ օրերի անհամեմատ ավելի մարդաշատ ցույցերին արդեն հնչում էին արդարության վերականգնման, այդ և նախորդ հանցագործություններին

9. 2016 թ. հունիսի 6-ին ԼՂ ընդդիմադիր քաղաքական գործիչ, ԼՂ ԱԺ նախկին պատգամավոր, «Ազգային վերածնունդ» կուսակցության նախագահ Հայկ Խանումյանին Ստեփանակերտում դաժան ծեծի էին ենթարկել զինվորական համազգեստով անձինք, այնուհետև նրան տարել էին Ստեփանակերտի կողքի գյուղերից մեկը և շարունակել ծեծել՝ արդեն ավելի շատ մարդկանցով: Պատգամավորին ծեծելու դեպքի առթիվ հարուցվել էր քրեական գործ, որը, սակայն, վերաորակվել էր՝ առևանգումից դառնալով խուլիգանություն: Ըստ Խանումյանի՝ գործը վերաորակվել էր կալանավորված անձանց համաներմամբ ազատ արձակելու համար: Նա ծեծը անվանել է քաղաքական պատվեր՝ մեղադրելով ԼՂ նախկին նախագահ Բակո Սահակյանին թե՛ հանցագործության կազմակերպման, թե՛ այն կոծկելու մեջ: Տե՛ս Ղուկասյան, Ս. (2016, օգոստոս 31). *Հայկ Խանումյանին ծեծի ենթարկելու գործը կարճեցին. նա համոզված է, որ քաղաքական պատվեր է*. Armtimes.com. վերցվել է՝ https://armtimes.com/hy/article/92432

10. Հակոբյան, Թ. (2018, հունիս 5). *Շոկային թերապիա Արցախի փակ կառույցների համար*. Civilnet.am. վերցված է՝ shorturl.at/hmDS2

գնահատական տալու, սահմանադրական իրավունքը գործադրելու, թշնամիով ժողովրդին անընդհատ մանիպուլացնելու քաղաքական էջը թերթելու, իշխանությունների հանդեպ վախը հաղթահարելու կոչեր[11]: Թեև ցույցերը դադարեցին Նիկոլ Փաշինյանի հորդորով, այդուհանդերձ, դարձան տեղում հանրային և քաղաքական խնդիրների բարձրաձայնման, կամարտահայտման, փողոցային պայքարի դիպվածային փորձառություն: Այս կերպ սահմանվում էր ժողովրդավարական երկրում ապրելու, ազատ կամարտահայտության ցանկությունն իբրև կարևոր իրավունք:

Իրավունքի սահմանումները, դրանց կարևորության գիտակցումն ու պաշտպանելու կարևորությունը, այդուհանդերձ, հանգում էին մի սահմանի, որից հետո հնարավոր էր զիջել սեփական այս կամ այն իրավունքը, հրաժարվել դրանից: Առկախված պատերազմական դրությունը որոշակիացրել էր մարդկանց՝ խաղաղության իրավունքի անքննելիությունը, հետևաբար խաղաղության համար պայքարը, կռիվը ևս ձևակերպվում էին իբրև իրավունք, որից հրաժարումը ոչ միայն հռչակվում էր անթույլատրելի, այլև գերակա էր այլ իրավունքների նկատմամբ, ինչպես, օրինակ՝ խոսքի ազատության, ազատ կամարտահայտման, արժանապատիվ աշխատանքի իրավունքները: Իրավունքի ըմբռնումները ձևավորվում էին ընդհանուր բարոյականացված և հայրապաշտական մշակութային համատեքստում, որում մարդիկ պատրաստ էին զիջելու կարևոր հռչակվող իրենց այս կամ այն իրավունքը կամ հրաժարվելու դրանից: Այս հանգամանքը հատկապես նկատելի էր պատանի և երիտասարդ աղջիկների պարագայում, ովքեր ավելի պատրաստակամ էին չբարձրաձայնելու իրենց իրավունքների սահմանափակումների մասին կրթական հաստատություններում, աշխատավայրում և ընտանիքում: Որոշ դեպքերում իրավունքներից հրաժարումը, դրանց ոտնահարումների մասին չբարձրաձայնումը դիտարկվում էին հարազատների, ընտանիքի, միջավայրի հանդեպ հոգատար վերաբերմունքի և սիրո համա-

11. Civilnet.am. (2018, հունիս 3). *Ադրբեջանցի՛ն թող վախենա. հայկական հեղափոխության շունչը Արցախում*. վերցված է՝ shorturl.at/ijuwT

տեքստում: Այս հանգամանքը պայմանավորված էր նաև իրավունքի ըմբռնման առանձնահատկություններով. այն մերթ կարծիք էր, մերթ կենցաղային հարց, մերթ պարտականություն, մերթ պայքար, մերթ կենսական անհրաժեշտություն:

Հրազդան,
փետրվար, 2020

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՄԱՐԴՈՒ ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Ապրելը: Որ չմտածեմ՝ այսօր կռիվ կլինի՞, թե՞ չէ: Որ չվախենամ... ***Հադրութ, 35-50 տ. կին***

Ինքնասիրությունը: Նախ ինքդ պիտի քե՛զ սիրես, հետո՝ դիմացինիդ: Մարդու պատիվը ամենակարևորն է: Կարող ես ամեն ինչ ներես, բայց... Մի խոսք կա՝ ավելի լավ է աչքդ դուրս գա, քան անունդ: Պատիվդ ուրիշի մոտ կյանքում չպիտի գցես: ***Մարտակերտ, 14 -18 տ. կին***

Եղել է, որ գալիս ասում էին՝ ո՛ւմ ես ընտրելու, ասում էի՝ քե՞զ ինչ: Չկա հիմա տենց բան: ...Բայց դեռ մի քանի տարի առաջ ընտրություններին ասում էին՝ սրան պետք է ընտրես, չընտրեցիր, գործից դուրս կգաս: Ստիպված անում էիր իրա քայլը: ***Քելբաջար, 35-50 տ. կին***

Անկախ լինելու իրավունքը: Ես չեմ կարող սահմանի մեջ ապրեմ, ես չեմ կարող կալանավորի նման ապրեմ: Էս վիճակում անձամբ ես մտածում եմ ընտանիքս վերցնեմ, գնամ ուրիշ երկիր, բայց էնտեղ էլ չեմ կարողանա ապրել: Էնտեղ էլ կլինեմ հյուր, կգրեն ՌԴ քաղաքացի: Բայց ես դա չեմ ուզում: Ես ուզում եմ իմ Արցախում ապրեմ, իմ Հայաստանում, ինձ համար տարբերություն չկա՝ Հայաստան թե Արցախ: Գիտեմ, որ էս իմ տունն է, իմ երեխաներն են, իմ աշխատանքն է, իմ դպրոցն է, ուր ես հաճախել եմ: Էդ չեմ կարա զիջեմ, դրա համար էլ ստեղ եմ ապրում, էս վիճակում: ***Հադրութ, 35-50 տ. կին***

Մեր հայրենիքը պահելը: Առաջինը դա է: Ոչինչ, մեր հայը թող մի քիչ էլ պակաս ապրի: Առաջին հերթին մեր սահմանները, մեր հողը: Տեղ չունենք գնալու, ո՛ւր պիտի գնանք: Հայաստան էլ տեղ չկա: ***Հադրութ, 50-75 տ. կին***

Ամենակարևորն այն է, որ խաղաղություն լինի, չվախենանք երեխաների համար. կռվի դաշտ է, ինչքան էլ չլինի, վախ կա մեջներս: Առաջինը դա է, երկրորդը, որ աշխատանքով ապահովված լինենք: Դա որ լինի, ամեն ինչ լավ կլինի, ինձ թվում է, և անհոգ կլինենք: ***Մարտակերտ, 19-35 տ. կին***

Այստեղ ժողովուրդը այնպիսի խնդիրների մեջ է, որ հազիվ հասցնում է հացի խնդիրը լուծել, չի հասկանում, թե իրավունքը ինչ է: Ոչ թե կգիջեն, այլ ուղղակի իրենք նույնիսկ իրենց իրավունքները չգիտեն, որ պաշտպանեն: ***Մարտակերտ, 19-35 տ. տղամարդ***

Մի քանի տարի առաջ, երբ մարդիկ փորձում էին իրենց խնդիրների, իրավունքների մասին բարձրաձայնել, կարծիք կար, որ պետք չի պառակտություն մտցնել հասարակության մեջ, մի՛ բարձրաձայնեք խնդիրների մասին, որովհետև թշնամին տեսնում ա, մեզ պետք ա միասնականացում և այլն: Էս հեղափոխությունից հետո մարդկանց աչքերը մի քիչ ավելի բացվեցին: Ես չեմ կարող ասել, թե հիմա իրենք հետևում են, որ իրենց

իրավունքները 100 տոկոս պաշտպանվեն, չոտնահարվեն, չեմ ասում, թե գլոբալ փոփոխություններ են եղել Արցախում, բայց գոնե էդ միֆը, որ մենք պատերազմող երկիր ենք, և մենք անընդհատ պետք է լռողի կարգավիճակում լինենք, կամաց-կամաց սկսում է ցրվել մարդկանց մեջ, որովհետև իրենք հասկանում են, որ դա զուտ մանիպուլյացիա է, որով իրենց լռեցնում են: ***Ստեփանակերտ, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ, 35-50 տ. կին***

Բոլորի հավասարությունը, իրենց բարձր ու ցածր դասող մարդիկ չլինեն, բարձրները իրենց «բարձր» չպահեն: ***Քելբաջար, 14-18 տ. տղա***

Ո՞ՐՆ Է ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ ԻՐԱՎՈՒՆՔԸ, ՈՐԸ ՁԵՔ ՁԻՁԻ

Հիմա իմ տարիքում ոչ մի իրավունք, բայց հետո որ գնամ ծառայեմ, հողերս չեմ տա: ***Ստեփանակերտ, 14-18 տ. տղա***

Որպեսզի թուրքերը Ղարաբաղը վերցնեն:
Ասկերան, 50-75 տ. կին

Հրազդան,
փետրվար, 2020

ԲԱԺԻՆ 2

ՊԱՏԵՐԱԶՄԻ, ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԸՄԲՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԵՎ ՈՉ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

Երասխ, 2018

2 1. ՍԱՀՄԱՆ ԵՎ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության խնդիրներից մեկը խաղաղության, պատերազմի և իրավունքների հարցերի շուրջ այնպիսի առանձնահատկությունների ուրվագծումն էր, որոնք կարող են պայմանավորված լինել սահմանից հեռավորությամբ: Եթե Ղարաբաղն ըմբռնվում էր իբրև ինքնին սահման, ապա Հայաստանի ոչ սահմանամերձ համայնքներում սահմանի և պատերազմի հարցերն ունեին իրենց յուրահատուկ ընկալումները:

Սահմանն այն գիծն էր, որ որոշարկում էր հանգիստ և անհանգիստ, անվտանգ և վտանգված, ապահով և անապահով անհատական և հանրային կյանքի ըմբռնումները Հայաստանի ոչ սահմանամերձ և սահմանամերձ համայնքներում: Սահմանն այն գիծն էր, որ որոշարկում էր ապագայի ընկալումը. անորոշության և առկախված ապագայի մտայնությունը, որ այդքան բնորոշ էր Ղարաբաղի և մասամբ Հայաստանի սահմանամերձ համայնքներին, ոչ սահմանամերձ համայնքների բնակիչների մտայնությունների տիրույթում չէր: Կյանքը հնարավոր էր ծրագրել և կազմակերպել. այս առաջին հայացքից պարզ և սովորական հնչող դատողությունը Ղարաբաղում առօրյա խորհրդածության առարկա էր, հաճախ բարեբախտություն համարվող հնարավորություն: Միաժամանակ սահմանն այն գիծն էր, որ համերաշխ էր դարձնում բոլորին. ոչ սահմանամերձ համայնքների բնակիչները ոչ միայն գիտակցում էին իրենց՝ կյանքի քիչ վտանգվածության տեսանկյունից արտոնյալ դիրքը, այլև հստակորեն ձևակերպում էին այդ գիտակցումն իբրև երախտապարտություն՝ գնահատելով խաղաղության ու հանգստության պայմաններում ապրելու իրենց հնարավորությունը:

Սահմանամերձ համայնքներում (Երասխ, Արմաշ, Արենի, Խաչիկ), ինչպես Ղարաբաղում, կար վտանգվածության որոշակի զգացում, ինչպես նաև առօրյա կյանքը կրակոցներին հարմարեցրած կենսաձևի բարձրաձայնում: Միաժամանակ սահմանամերձության ինքն-

ընկալումը նվազ չափով էր արտահայտված. ոմանք կեսկատակ-կեսլուրջ ասում էին, թե հեռուստատեսությունից են տեղեկանում, որ իրենց համայնքը սահմանամերձ է: Այս համատեքստում Ղարաբաղն էր, որ առավելապես դիտարկվում էր իբրև վտանգված սահման, իսկ սեփական սահմանամերձությունը և վտանգվածությունը՝ քննվում վերապահումների համատեքստում:

Առկախված պատերազմի դրությամբ պայմանավորված՝ սահմանամերձ համայնքների սոցիալական կյանքը և տնտեսությունը մեծապես կախյալության մեջ են բանակից՝ աշխատատեղ տրամադրող հիմնական ինստիտուտից: Սա, իհարկե, առավելապես ցայտուն էր Ղարաբաղում, որտեղ և՛ տղամարդիկ, և՛ հատկապես կանայք ցածրաձայն դժգոհում էին անհատական և հանրային կյանքի ոլորտների՝ ռազմականից շարունակական կախյալության մեջ լինելուց: Ոչ միայն պետության բյուջեի մի առյուծի բաժին, համայնքի մանկապարտեզի շենք, այլև մարդկանց կյանքի գործունեությունն է զբաղեցվում ռազմական գործով, անգամ ոչ թեժ պատերազմական շրջանում: Սահմանամերձ համայնքն այսուհետ կորցնում է սովորական համայնքային կյանք և սոցիալական կյանքի բազմազանություն ունենալու հնարավորությունը. միակ գոյության ձևը, որ մտածվում է, «սահմանապահ» համայնք լինելն է[12]:

Երևանին մոտ համայնքներում սահմանը, իհարկե, Ղարաբաղն էր, իսկ ղարաբաղյան կոնֆլիկտը, որքան էլ վերաբերելի էր բոլորին, այդուհանդերձ, ամենօրյա կյանքի մասնիկ չէր: Հեռավորությունը սահմանից, կրակոցների և հնարավոր պատերազմի առաջնային թիրախում չլինելը փորձառության այն շրջանակն էր, որ թույլ էր տալիս դատողություններ անել կոնֆլիկտի ազդեցությունների ավելի լայն, հեռանկարային չափումների և դրա հանգուցալուծման ընդունելի եղանակների շուրջ: Այս համատեքստում առավել անկաշկանդ էին հնչում կոնֆլիկտը խաղաղությամբ՝ տարածքային զիջումներով հանգուցալուծելու դիրքորոշումները:

12. Ժամակոչյան, Ա., Խաչատրյան, Ծ. *Պատերազմի մասին առօրյայում*. socioscope.am. վերցվել է՝ http://socioscope.am/archives/1670

2 2. ՊԱՏԵՐԱԶՄ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ. ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ

Պատերազմը և կրակոցները նախ և առաջ խաղային ներիմաստ ունեն պատանի տղաների համար: Նրանց ոգևորում էր կռիվ-կռիվ խաղալու հեռանկարը, սակայն այդ խաղը մեծահասակների միջամտությամբ և խրախուսանքով լրջանում էր, դառնում դիրքորոշում:

> *Ռազմականացման պաթոսն ու էթիկան ոչ միայն արդեն եղած սոցիալական հաստատություններ՝ դպրոցներ, մանկապարտեզներ, ընտանիքներ է ներխուժել, այլև առանձին՝ մասնագիտացված կառույցների գործունեությամբ և աշխատանքով ինստիտուցիոնալ արմատներ է գցել[13]:*

1990-ականներին ծավալված Ղարաբաղյան առաջին պատերազմը պատանի աղջիկների և տղաների համար առավելապես մեծերից փոխանցված գիտելիք էր և հիշողություն, հեռավոր պատմություն: Նրանց համար «իրական» պատերազմը մինչև Ղարաբաղյան երկրորդ պատերազմը 2016 թ. ապրիլյան սրացումն էր: Հայաստանի սահմանամերձ համայնքներում ռազմական ռեժիմով ապրող մարդկանց արտահայտած զանազան դիրքորոշումները, որքան էլ պայմանավորված էին որոշակի տեղով և ժամանակով, ներհատուկ էին հայաստանյան դրությանը, միաժամանակ երևան էին բերում և գիտակցվում որպես համընդհանուր խնդիրներ, որոնք վերաբերում էին պատերազմներից ազդված հասարակություններին, այդ թվում՝ մեր սահմանի հակառակ կողմում գտնվողների կյանքին[14]:

Տարբեր էին Հայաստանում և Ղարաբաղում պատերազմի և խաղաղության պատկերացումները: Հայաստանի սահմանամերձ համայնքներում էլ, անկախ պատերազմի առօրյա առկայության ռիսկից,

13. Նույն տեղում
14. Նույն տեղում

միևնույնն է, պատերազմը մարդկանց համար ավելի հեռու էր, քան Ղարաբաղի բնակիչների համար: Պատերազմի հետ նրանց առնչությունը պարբերաբար խաղաղ կամ ոչ խաղաղ պայմաններում զինվորների մահվան մասին տեղեկություններն էին: Առկախված պատերազմի գիտակցումն առավելապես խորն էր Ղարաբաղում ծառայած տղամարդկանց շրջանում, իսկ 2016 թ. ապրիլյան սրացումն այդ վտանգը դարձնում էր ավելի իրատեսական: Դպրոցահասակ պատանիների մոտ Հայաստանի և Ադրբեջանի հարաբերությունների մասին գիտելիքը ձևավորվում էր մեդիայի, հարազատների պատմած պատմությունների, ուսուցիչների հետ քննարկումների, զինվորական հարազատների միջոցով: Պատերազմը նրանց թվում էր հեռու մի բան, որի մասին լսել էին և կարդացել. հետաքրքրական է, որ պատերազմի մասին զրույցները դպրոցահասակների հետ հիշեցնում էին լավ սերտած դասագրքային սահմանումներ՝ հատվածական, երբեմն լի ռազմահայրենասիրական պաթոսով: Պատերազմի մասին ինստիտուցիոնալ և վերարտադրվող գիտելիքի համատեքստում պատանի տղաները ձգտում էին հերոսականության՝ այդ կերպ անքննելի դարձնելով պատերազմի մասնակցության պարտքը: Պատերազմի այսպիսի ռոմանտիզացված ըմբռնումը շղարշում էր դրա՝ իրական և մութ կողմին առերեսվելու կարողությունը: Պատերազմի ռոմանտիզացված այս գերակա մտայնության շրջանակում երբեմն առկայծում էին պատերազմը խնդրականացնող պատանի տղաներ, որոնց բառապաշարից բացակայում էր կռվի գովերգումը, նոր հողեր գրավելու պահանջը, որոնց համար հարազատ մարդկանց և հայրենիքի հանդեպ սերը կարևոր էր դարձնում խաղաղ պայմաններում հանգիստ ապրելու երազանքը[15]:

Նկատելի է, որ պատերազմի մասին խոսելիս պատանի աղջիկները ավելի հեշտությամբ էին խաղաղասիրական, փոխըմբռնմանը միտված վերաբերմունք դրսևորում ադրբեջանցիների հանդեպ: Պատերազմի իրական երեսի և դրա բերած խնդիրների մասին աղջիկներն ավելի ազատորեն էին դատում:

15. Նույն տեղում

Ոչ սահմանամերձ համայնքներում հետազոտության իրականացման շրջանում դրությունը սահմանվում էր իբրև *«ո՛չ պատերազմ, ո՛չ խաղաղություն»*՝ պարուրված պատերազմի անսպասելի զարգացման վտանգով և զգուշավորությամբ: Միաժամանակ խաղաղությունը մեկնաբանվում էր որպես հզոր պետություն ունենալու և խաղաղության սեփական օրակարգը *պարտադրելու* կարողություն: Եթե պատերազմն ըմբռնվում էր իբրև Հայաստանին և Ղարաբաղին Ադրբեջանի կողմից *պարտադրված* ֆենոմեն, ապա խաղաղությունը ձևակերպվում էր իբրև Հայաստանի կողմից Ադրբեջանին պարտադրվող մի բան: Ինչպես տեսանք, այս ընկալումը տեղ էր գտել նաև Նիկոլ Փաշինյանի՝ ղարաբաղյան հարցի հռետորաբանության մեջ՝ ինչպես ազդելով ժողովրդական ընկալումների վրա, այնպես էլ ազդվելով դրանցից:

2019 թ. ապրիլի 8-ին ԱԺ-ում լրագրողների հետ զրույցում Նիկոլ Փաշինյանն ասում էր. *«Որևէ մեկը թող չմտածի, որ եթե մեր դեմ պատերազմ սկսեցին, փլավն առնելու ենք և բաժանելու բոլորին: Ո՛չ, մեզ պարտադրված պատերազմի դեպքում մենք պարտադրելու ենք խաղաղություն: Եվ մեր պատերազմի նպատակը պատերազմը չի լինելու, մեր պատերազմի նպատակը խաղաղությունն է լինելու, և դա մեր պատերազմը չի լինելու, մենք չենք պատրաստվում որևէ մեկի դեմ ռազմական գործողություն սկսելու, բայց եթե որևէ մեկը մեր դեմ ռազմական գործողություն սկսի, մենք դրան պարտադրելու ենք խաղաղություն»*[16]:

Պարտադրված պատերազմի կամ խաղաղության հաստատման համար պատերազմից հրաժարվելու անելանելիության այս մտայնությունն է, ահա, որ տարիներ շարունակ գերակա տեղ է զբաղեցրել հայաստանյան քաղաքական խմորումներում՝ սնելով նաև, այսպես կոչված, արդարացված պատերազմի մասին հասարակական ընկալումները: Մինչդեռ հանրային-քաղաքական քննարկումներից և խմորումներից սպրդել են մի շարք կարևոր հարցեր. ո՞րն է ի վերջո

16. primeminister.am. (2019, ապրիլ 8). *Մեզ պարտադրված պատերազմի դեպքում մենք պարտադրելու ենք խաղաղություն*. վերցվել է՝ https://bit.ly/3mZ2H5e

ղարաբաղյան կոնֆլիկտի էությունը, ի՞նչ հարցերի շուրջ են խմորվել բանակցությունները և ինչո՞ւ, ո՞րն է պարտադրված պատերազմի և հարկադրված խաղաղության գինը, և ի վերջո ովքե՞ր են վճարելու այդ գինը: Այս և այլ կարևոր հարցերի շուրջ կցկտուր հրապարակումները սկսեցին պատերազմից հետո միայն[17]՝ ուշացած զրույցներ, որոնք կրկին ելնում էին պարտադրված պատերազմի անելանելիությունն արդարացնելու քաղաքական գծից:

Ոչ սահմանամերձ համայնքներում ապրողների կողմից խաղաղության արժևորումը նախ և առաջ գիտակցված ապրումակցում էր Ղարաբաղում և սահմանամերձ համայնքների բնակիչների կյանքի հանդեպ:

Հայ և ադրբեջանցի երիտասարդները միմյանց հետ ուղիղ շփում չեն ունեցել: Սահմանամերձ համայնքներում ընդամենը մի քանի հարյուր մետր հեռավորության վրա ապրող մարդիկ իրար չէին ճանաչում, բայց միմյանց մասին շատ բան «գիտեին»: Նրանցից ոմանք նոր գիտելիք էին փնտրում: Իսկ համեմատաբար տարեցները և միջին տարիքի մարդիկ ապրել, շփվել և ընկերություն են արել ադրբեջանցիների հետ: Կային հիշողություններ այն մասին, որ կողք կողքի ապրող հարևաններն իրար տուն են այցելել, դժվար ժամանակ օգնել իրար[18]: Մարդկանց դատողություններում թե՛ իրենց, թե՛ սահմանից այն կողմ ապրողների առօրյա կենսակերպը նույնն է: Թեև ոմանց հիշողություններում դեռ մնացել էին որոշ հարևանների՝ «մարդկային դեմքի» պատկերների պատառիկներ, սակայն ձգձգվող հակամարտությունն այդ պատկերն աղավաղել էր, խճճել, դարձրել կաղապարային կերպար. թշնամին «նենգ է», «արնախում», իսկ հայերը՝ բարի, հանդուրժող և ներող[19]:

17. Փաշինյան, Ն. (2021, հունվարի 4). *44-օրյա պատերազմի ծագումը*. primeminister.am. վերցվել է՝ https://bit.ly/3ak7OrA

18. Խաչատրյան, Ծ. *Նրանք. սահմանից այն կողմ ապրողները*. socioscope.am. վերցվել է՝ http://socioscope.am/archives/1451

19. Նույն տեղում

Խոսքի մեջ կարմիր թելով անցնում էր «վերջնական պատերազմ» ձևակերպումը, որին սպասում էին բոլորը թե՛ սահմանամերձ, թե՛ ոչ սահմանամերձ համայնքներում. վերջնական պատերազմն էր, որ պետք է հարցը լուծեր «այս կամ այն կողմ» տարբերակով:

Հայաստանի ու Ադրբեջանի լարված հարաբերություններն առաջ էին բերում անհանգստություն Ղարաբաղում ծառայողների համար. առավել խիզախները քննադատում էին Հայաստանից Ղարաբաղ զինվորներին ծառայության ուղարկելը: Ղարաբաղում ծառայությունը դիտարկելով իբրև կենսական վտանգ՝ երբեմն ընդունելի էր համարվում, օրինակ, Տավուշում սահմանների պաշտպանությունը ռուս խաղաղապահներով համալրելու հնարավոր մոտեցումը: Որքան էլ խաղաղությունը ցանկալի և սպասելի էր, աներկբա խաղաղության անհնարինությունը մարդկանց մտահոգությունների առանցքում էր: Արտաքին՝ սահմանի խաղաղությունը կապվում էր ներքին՝ հանրային համերաշխության և խաղաղության հետ, իսկ բանակը դիտվում հենց այդ ներքին համերաշխության և խաղաղության ծիրում: «Ո՛չ պատերազմ, ո՛չ խաղաղություն» դրության հաղթահարումը նախ և առաջ տնտեսական առաջընթացի, ներդրումների աճի, սահմանամերձ համայնքների զարգացման, հարևանների հետ «հանգիստ ապրելու» հնարավորություն էր:

Մարտակերտ, 2019

ԻՆՉՊԵ՞Ս Է ՏԱՐԲԵՐՎՈՒՄ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՅԱՆՔԸ ՈՉ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՅԱՆՔԻՑ

Հիմնականում տարբերությունը պատերազմները, կրակոցներն են... Խաղաղ է այստեղ, սահմանամերձների նման չի, այնտեղ կրակոցներ են շատ լինում, հաճախ պատերազմներ են լինում, դրա համար այստեղ՝ մեր գյուղում, շատ լավ է այդ առումով: ***Ուշի, 14-18 տ. աղջիկ***

Օրինակ՝ ծնողներն ամեն օր իրենց երեխաներին ուղարկում են դպրոց և չգիտեն, թե ինչ հարվածների միջով կանցնեն իրենց երեխաները: ***Ուշի, 14-18 տ. տղա***

Ապրելակերպն էլ է տարբեր. այնտեղ այդքան գործարան, բան չկա, այստեղ կան: Այնտեղ մի կերպ «յոլա են գնում», հիմնականում գյուղատնտեսություն է: Իսկ այստեղ արդյունաբերություն կա որոշ չափով: ***Հրազդան, 35-50 տ. տղամարդ***

Օրինակ, որ թուրքերը հարձակվում են մեր վրա, մեզ ոչ մի բան չի լինում, բայց իրենց գյուղերը քանդվում են, մեր մոտ այդպիսի բաներ չեն լինում: ***Ուշի, 14-18 տ. աղջիկ***

Սահմանամերձը դժվար է, ճանապարհները հարմար չեն, կտրված են քաղաքից: ***Հրազդան, 19-35 տ. տղամարդ***

Սահմանամերձ տարածքներում մարդիկ ի՞նչ պետք է անեն, գյուղատնտեսությամբ պետք է զբաղվեն, բայց որ мина-ն պայթում է, լսում ես, վատ ես զգում: Ճիշտ է, քո հետ չի պատահել, բայց միևնույնն է, վատ ես զգում: ***Հրազդան, 19-35 տ. տղամարդ***

Այստեղ մենք խաղաղ ենք, կրակոցների մասին հեռուստացույցից ենք լսել, իսկ մեր լսած ամենաուժեղ ձայները մեր հրավառությունների ձայներն են եղել: Իսկ այնտեղ այդ կրակոցների ձայնը ամեն օր են լսում, մշտապես վախի մեջ են ապրում, տնից դուրս գալ չեն կարողանում, որովհետև այդ դեպքում իրենց կյանքը մի հատ թելից է կախված: ***Ուշի, 19-35 տ. կին***

Այստեղ ազատ ենք, մենք ինչի չե՞նք հասկանում, որ նրանք ամբողջ օրը վախի մեջ են, որ հեսա կրակեն, մի բան կլինի: Այստեղ մենք ազատ ենք, հանգիստ ենք, այստեղ մեզ խանգարող չկա: ***Հրազդան, 50-75 տ. կին***

Սահմանամերձ լինի, Երևանում ապրող լինի, միևնույնն է, իրենք չգիտեն, թե վաղը ինչ կլինի: ***Հրազդան, 19-35 տ. տղամարդ***

Ի՞ՆՉ Է ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ

Եթե բոլորը ինձ նման մտածեին, բոլոր զենքերը կթաղեին հողի տակ և կնստեին իրենց համար, հանգիստ կապրեին: Ես ուղղակի, այսպես ասած, ատում եմ այդ պատերազմը և չեմ էլ ուզում հետաքրքրվեմ, ուղղակի իմանում եմ զուտ իմանալու համար: ***Արենի, 14-18 տ. տղա***

Խաղաղությունն այն ժամանակ կլիներ, երբ առաջվա նման բարեկամական հարաբերություններով ապրեն, հարևան ժողովուրդներ են, չէ՞: Ինձ թվում է՝ այլևս նման բան չի լինի, ինձ թվում է՝ հայն ու թուրքը երբեք էլ լավ չեն լինի: Որովհետև այսքան արյուն է թափվել, այդքանից հետո այլևս չի լինի: Թշնամու հետ չենք կարող բարեկամություն անել: ***Արշալույս, 35-50 տ. տղամարդ***

Որ կրակոցներ չլինեն, մեր զինվորները հանգիստ ծառայեն, վերադառնան իրենց ընտանիք: Ես էլ եմ եղբայրներ ունեցել, ովքեր ծառայել են, հիմա էլ երկու եղբայրս բանակում են, ծառայում են: Ես կուզեմ, որ իրենք էլ անփորձանք վերադառնան: Խաղաղությունը հենց դա է, որ մենք ապրենք մեր հողերի վրա, մեր ընտանիքի կողքին: ***Ուշի, 14-18 տ. աղջիկ***

Մենք մինչև չհզորանանք թե՛ ռազմապես, թե՛ տնտեսապես, որ Ադրբեջանը հույսը կտրի, որ այս հողերը կարող է հետ ստանալ, [խաղաղություն չի լինի]: Մենք պետք է հզորանանք, մենք մեր հաղթանակը պետք է պաշտպանենք, մեր հողը պաշտպանենք: ***Արշալույս, 50-75 տ. տղամարդ***

Խաղաղությունն այն է, որ բանակը վերանա: Հայաստանում դժվար [բանակը վերանա], բայց ուրիշ երկրներում հնարավոր է: Հայաստանը շրջապատված է մուսուլմանական երկրներով, դժվար այնքան զարգանա, որ բանակը վերանա: ***Ուշի, 14-18 տ. տղա***

Այն ժամանակ մենք այդ մասին չէինք էլ մտածում, քանի որ գտեինք, որ միշտ խաղաղ է լինելու: Մենք չե՞նք գնացել Բաքու, գնացել ենք, ո՞վ էր մեզ բան ասում, կամ Թուրքիա չե՞նք գնացել: Հիմա վախենալով են գնում: Այն ժամանակ խաղաղ էր, կամ նրանք այստեղ՝ մեր Հանքավանում, չէի՞ն ապրում: Այդպես էլ պետք է լինի, ոչ թե այսպես, որ վախենաս կամ նույնիսկ ուրիշ տեղ մի հատ մորուքով մարդ տեսնես, մտածես, որ հանկարծ թուրք չլինի: Դա էր խաղաղությունը, ոչ թե հիմա, որ անընդհատ սպասես, թե հեռուստացույցով չասեն, որ մեկի վրա կրակել են: Երիտասարդի կորուստը բոլորի համար ցավ է: Ամենակարևորը դա է: ***Հրազդան, 50-75 տ. կին***

Խաղաղությունն այն է, որ դու կարողանաս գլուխդ հանգիստ դնես բարձին, քնես գիշերը, ոչ թե ամեն վայրկյան սպասես, որ հեսա մի բան կլինի: ***Հրազդան, 14-18 տ. աղջիկ***

[Խաղաղությունը], որ մարդիկ խաղաղ ապրեն, հանգիստ, որ վախվխելով սարսափի մեջ չապրեն, տնից դուրս գալիս հանգիստ դուրս գան, չնայեն կողքերը, որովհետև իրոք վտանգավոր է, երեխաներին էլ որ դուրս ես հանում, մեզ մոտ իրոք շատ մոտիկ է [սահմանը]: ***Երասխ, 19-34 տ. կին***

Խաղաղությունն այն է, որ երեխայիդ ուրախ ճանապարհես բանակ՝վստահ լինելով, որ երկու տարի հետո գալու է, չմտածես, որ սահմանից կարող է կրակեն և այլն: Խաղաղությունն ամենաառաջինը դա է: ***Արմաշ, 35-50 տ. կին***

Որ ազգերը համերաշխ ապրեն: Իրենց համար առանձին ապրեն առանց կռվի: Օրինակ՝ հայերը ապրեն իրենց հայրենիքում, իսկ թուրքերը՝ իրենց հայրենիքում: ***Ուշի, 14-18 տ. աղջիկ***

Ի՞ՆՉ Է ՊԱՏԵՐԱԶՄԸ

Նշանակում է՝ «մի աչքդ փակ, մեկը միշտ բաց պետք է լինի», անընդհատ պատրաստ պետք է լինես, ցանկացած պահի: Ապրիլին ո՞վ կսպասեր, որ հարձակում կլինի: Նույնն էլ հիմա է, ամեն վայրկյան սպասում ես, որ հարձակում կլինի: ***Արշալույս, 50-75 տ. տղամարդ***

Ապրիլյանին տեսանք՝ ինչ կատարվեց. Առաջինը՝ խաղաղ բնակչության մեջ մտնելը: Դա ամենաանտանելի բանն է, որ կարող է պատերազմում լինել: Քանի որ դեռևս նման բան չենք տեսնում, այս պահին չեմ կարծում, որ պատերազմ է: ***Ուշի, 19-35 տ. կին***

Որ երկու ազգեր իրար հետ կռիվ են անում հայրենիքի համար, որ տեսնեն՝ ո՛ր ազգը կգրավի հայրենիքը, ու այդպես մարդկանց կործանում են հայրենիքի համար: ***Ուշի, 14-18 տ. աղջիկ***

Երբ ժողովրդի մեջ խառը վիճակ է տիրում... Ամեն ինչ խառնվում է, բոլորի կյանքն է խառնվում. առևտուր լինի, դպրոց գնալ լինի կամ այլ բան, ամեն ինչի վրա ազդում է: ***Հրազդան, 19-35 տ. տղամարդ***

Պատերազմը շատ վատ բան է, բայց լինելու դեպքում պարտադիր պետք է մասնակցես: Քառօրյա պատերազմը որ եղել է, մեր

մոտից էլ են գնացել. մի գյուղ վերև Քյարամ Սլոյանն էր ապրում: Դա մեզ ոգեշնչում է, որ մենք էլ պետք է մասնակցենք, որովհետև այդ մարդը իր կյանքի գնով մեզ պաշտպանեց:
Ուշի, 14-18 տ. տղա

Իրար չհասկանալը, չհամաձայնելը կամ ինչ-որ տարածքների համար մեկը պնդում է՝ սա իմն է, մյուսը պնդում է՝ չէ՛, իմն է:
Երասխ, 19-34 տ. կին

ՊԱՏՐԱ՞ՍՏ ԵՆ ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ

Հաստատ իրենք էլ են ձգտում խաղաղության: Իրենք էլ կուզենան, որ հանգիստ ապրենք: Մի կյանք ենք ապրում՝ միջին տվյալներով 60-65 տարի, ավել չկա, ու չգիտես, թե վաղը ինչ կլինի: Կարելի է այդ տարիներն ուղղակի վայելել, ոչ թե կռվել:
Արենի, 18-35 տ. կին

Սովետական Հայաստանում նույնիսկ իրար կողքի այստեղ ապրել են հայերն ու ադրբեջանցիները: Չեմ կարծում, որ խանգարել են իրար, ուղղակի հիմա .... Օրինակ դրսում հնարավոր է հայերն ու ադրբեջանցիները ընկերություն անեն, գործ ունենան իրար հետ ու չքաղաքականացնեն: Ուղղակի իրենց ժողովրդին այդպես են դաստիարակել, որ հայը իրենց թշնամին է, հայ սպանելը հերոսություն է, բայց մենք չենք անում նման բան:
Երասխ, 19-34 տղամարդ

Չեմ կարող պատասխանել: Կախված նրանից, թե այդ համաձայնագրից հետո իրենք իրենց ինչպես կդրսևորեն: Թեկուզ ես կարող է ուզեմ [խաղաղ ապրել], բայց իրենք չուզեն: Իրենցից էլ է դա գալիս, մեզանից էլ: ***Արշալույս, 14-18 տղա***

Դրա [խաղաղության] համար պետք է երկու կողմերի համաձայնությունը: Իրենք իրենց պայմանները պետք է անեն: Մենք մեր հերթին ինչ կախված է անում ենք: ***Արմաշ, 14-18 տղա***

Ասկերան, 2019

ՀՆԱՐԱՎՈ՞Ր Է ՇՓՎԵԼ ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԻ ՀԵՏ

Մարդիկ ապրում են կողք կողքի՝ հարևանությամբ, իրենք էլ են տուժում, մենք էլ ենք տուժում այս վիճակից: Իրենք էլ չէին ցանկանա, որ այսպես լիներ, մենք էլ: ***Արշալույս, 35-50 տ. կին***

Հասարակ ժողովրդի մեջ չեմ կարծում, որ այդքան խնդիր կլինի: Կոնկրետ ես մտածում եմ, որ ո՛չ ադրբեջանցիների, ո՛չ թուրքերի հետ ոչ մի խնդիր չունեմ: Շատերը իմ հետ համաձայն չեն լինի, բայց ես մտածում եմ, որ այսօրվա թուրքը կամ ադրբեջանցին մեղավոր չի անցածի համար: Իսկ կառավարությունները... Չարդարացնեմ մեր կառավարությանը, բայց կարծում եմ՝ Ադրբեջանի կառավարության կողմից ավելի շատ են ոտնձգությունները: ***Ուշի, 19-34 տ. կին***

Այսօր մենք երեխաներին պահում, մեծացնում ենք, ուղարկում ենք այնտեղ, չգիտենք՝ հետ են գալու, թե ոչ: Դա է Հայաստանի և Ադրբեջանի հարաբերությունները: Չգիտես՝ երեխայիդ բանակ ես ուղարկում, թե ուր ես ուղարկում: Ով էլ վերադառնում է, 3-4 տարի պետք է, որ խելքները գան գլուխները: ***Ուշի, 35-50 տ. կին***

Բոլորն էլ անմեղ են, գլխավորներն են էլի [մեղավոր]... Ինձ պատմել են այդպիսի դեպք, որ պատերազմի ժամանակ եղել են թուրքեր, որ մարդկանց օգնել են, իրենց մարդկությունը չեն կորցրել: ***Հրազդան, 14-18 տ. տղա***

Այո՛, նախկինում ո՞նց է եղել: Նախկինում այստեղ միրգ վաճառողները, օրինակ, ադրբեջանցիներ էին: Ես այն ժամանակ քանի անգամ եմ գնացել, այնտեղից էժան մթերք եմ բերել փակելու համար: ***Հրազդան, 50-74 տ. տղամարդ***

ԻՆՉՊԵ՞Ս ՊԻՏԻ ԼՈՒԾՎԻ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑԸ

Մեկնումեկը պետք է համաձայնության գա, որ ավարտվի: Այ՛, պետք է զիջումներ լինեն: Եթե իրենք իրենցը ասեն, մենք՝ մերը, անընդհատ այսպես է լինելու: ***Արշալույս, 35-50 տ. կին***

Պետք է համաձայնության գան, այսինքն՝ ոչ թե ոչնչական, այլ հասկանան, որ այդ հողերը մերն են, լռեն, որ չլինի այդ կռիվը: Մերոնք էլ սխալ կանեն, եթե տան այդ հողերը: Այդ հողերի համար անմեղ արյուն է թափվել, ո՞նց տան: ***Ուշի, 35-50 տ. կին***

Այս հարցի լուծումն այն է, որ մեկը զիջի, կամ երկու կողմն էլ այնպես անեն, որ Ղարաբաղում երկու ժողովուրդներն էլ ապրեն, դրա հետ կարող է համաձայնվեն: Ես այդպես եմ կարծում: Սովետի ժամանակ ո՞նց է եղել. Ղարաբաղում և՛ հայեր են ապրել, և՛ ադրբեջանցիներ են ապրել: ***Հրազդան, 19-35 տ. տղամարդ***

Երբ իրենք կործանվեն: Իրենց չարության պատճառով կկործանվեն, կմահանան, ովքեր էլ բարի են, կհաղթեն, առողջ կմնան: ***Ուշի, 14-18 տ. աղջիկ***

[Հարցը կլուծվի], երբ գա դրանց [Ադրբեջանի] վերջը... Ադրբեջանը անցնի հողի տակ, մեր ժողովուրդը կպրծնի դրանցից, ամբողջ աշխարհը կպրծնի: ***Ուշի, 35-50 տ. կին***

Վերջնական պատերազմով: Վերջնական, այսինքն՝ կամ այս կողմ, կամ այն կողմ: ***Ուշի, 14-18 տ. տղա***

Եթե իշխանություններն այն ժամանակ ցանկանային, պայմանագիր կկապեին, այս վիճակը չէր լինի: Պետք է խաղաղություն լինի, որ գումարը դնեն, տնտեսություն զարգացնեն, իսկ այսպես ամբողջ գումարը գնում է ռազմական տեխնիկայի, բանակի վրա: ***Խաչիկ, 36-50 տ. տղամարդ***

Ադրբեջանական կողմը պետք է համաձայնվի Արցախի բնակիչների կամքի հետ և անկախությունը ճանաչի: Երևի թե միակ լուծումը դա է: ***Հրազդան, 19-35 տ. կին***

Փոխզիջումների գնալ երկկողմանի: Այ՛, որ այդ հարցը լուծվի: Հարաբերություններ էլ ո՞ւր են, դու տեսնո՞ւմ ես, չկա հարաբերություն, ինչքան ժամանակ է՝ չկա: ...Ոչ լրիվ [հողերը տալ], իհարկե, բայց մի մասը կարելի է: Ճիշտ է, կռվողները կդժվարանան այդ հարցում, բայց ուրիշ լուծում չկա: ***Հրազդան, 50-75 տ. տղամարդ***

Մարտակերտ, 2019

2.3. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՋՄԱՆ ՍԱՀՄԱՆԸ

Իրավունքի մասին հարցերը մեծ մասամբ հանգում էին լռության գրեթե բոլոր քաղաքներում և գյուղերում: Իրավունքի շուրջ մտորումները սկսվում էին դրա մասին հարցերի ձևակերպումներից, պատասխանների բացակայությունը և «ճիշտ» պատասխանի փնտրտուքը հաճախ անհանգստություն էին բերում: Իրավունքի սահմանման մարդկանց պատկերացումները, իրավունքի սահմանների հաստատման, իրավունքները (չ)զիջելու հարցերում նրանց դիրքորոշումները տատանվում էին իրավունքի գաղափարի մասնավոր-կենցաղային ընկալումից մինչև դրա իրավապաշտպանական պատկերացումները, տեղը «չզիջելու» հետևողականությունից մինչև կամավոր զիջման և անձնազոհության պատրաստակամությունը:

Այս տեսանկյունից իրավունքի ընկալումները Հայաստանում շատ չէին տարբերվում Ղարաբաղում իրավունքի ըմբռնումներից: Այսպես, պատանիների համար իրավունքը դրսևորվում էր դպրոցում հասակակիցների կամ ուսուցիչների հետ հարաբերությունների կարգավորման հարցով՝ պարբերաբար առնչվելով դպրոցում իրենց իրավունքները պաշտպանելու անհրաժեշտությանը, բախվելով սեփական կարծիքը արտահայտելու սահմանափակումների՝ կապված «լավ» ու «վատ» սովորողների տարանջատման և պիտակավորման (բուլինգի) խնդիրների, ինչպես նաև տարիքային տարբերության հիմքով խտրականության հետ: Կրթական ոլորտում առկա խնդիրները բարձրաձայնվում էին՝ ձևակերպվելով իբրև կրթական իրավունքի լիարժեք պաշտպանության հարց, ավելին՝ որպես հետաքրքիր և բովանդակային դասապրոցեսի պահանջ: Երբեմն իրավունքն ընկալվում էր և մեկնաբանվում որպես սեփական ցանկությունները և մղումները իրագործելու և ինքնարտահայտվելու իրավասություն, մրցակցային պայմաններում սեփական «տեղը չզիջելու», հետևողականորեն առաջ գնալու պահանջի լեգիտիմություն: Իրավունքը բացվում էր նաև պատասխանատվության հարցի հետ փոխկապվածության համատեքստում. համայնքային կյանքում մասնակցություն ունենալու և համայնքային խնդիրները համատեղ լուծելու իրավունքը ևս քննարկվում էր իբրև յուրաքանչյուրի խնդիրները բարձրաձայնելու հնարավորություն[20]: Իրավունքի, պատասխանատվության և պարտականության փոխկապվածությունների հակասական ընկալումները պատանի տղաների ձևակերպումներում հանգում էր «հայրենիքը պարտադիր պաշտպանելու» իրավունքի կարևորմանը: Մեծահասակների պարագայում իրավունքի հարցը կրկին հանգում էր սոցիալ-տնտեսական, ներընտանեկան իշխանական կառուցվածքի, հանրային-քաղաքական հարցերին:

Եթե սոցիալ-տնտեսական և հանրային-քաղաքական իրավունքները քննարկվում էին ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց կողմից, ապա ներընտանեկան հարաբերություններում անհավասարության հարցը և դրանից բխող խնդիրները դրանք փորձառող կանանց մտահոգությունների տիրույթում էին: Կանանց համար ընտանիքը և հարազատական ցանցը ինչպես սեփական իրավունքների պաշտպանության ակնկալվող օղակներն են, այնպես էլ դրանք ոտնահարող հարաբերությունները: Թե՛ երիտասարդ, թե՛ տարեց կանայք կարևորում են ընտանիքում իրենց ձայնը լսելի դարձնելու իրավունքը՝ բացահայտելով դրա պակասը: Հատկապես երիտասարդ կանանց «ձայնազրկությունը» երևան էր գալիս իրենց երեխաների առօրյայի և կենսական հարցերի առնչությամբ որոշումներ կայացնելու սահմանափակություններով, ինքնավարության պակասով: Իսկ տարեց կանայք վերապրում էին երբեմնի որոշում կայացնողի իրավունքի կորուստը[21]:

Արժանապատիվ աշխատանք ունենալու իրավունքը հատկապես սահմանին ապրողների պատկերացումներում հիմնարար իրավունքներից էր: Ընդհանրացվելով աշխատանքի իրավունքը տղամարդ-

20. Խալաթյան, Մ. *Իրավունքի սահման(ում)ները սահմանին մոտ*. socioscope.am. վերցվել է՝ http://socioscope.am/archives/1673

21. Նույն տեղում

կանց համար վերաճում էր «ապրելու իրավունքի»: Կանանց համար աշխատանքի իրավունքը ոչ միայն սոցիալ-տնտեսական ոլորտին առնչվող հարց էր, այլև էական նշանակություն ուներ մասնավոր ազատության ձեռքբերման առումով՝ որպես սեփական կարիքները ազատորեն հոգալու, տնից դուրս գալու՝ «տեղաշարժվելու» իրավասության հնար: Սահմանամերձ համայնքների բնակիչները, աշխատանքի և տնտեսական ենթակառուցվածքների հարցում գլխավոր դերակատարում վերագրելով պետությանը, ակնկալում էին լայնածավալ միջոցների ներդրում այս համայնքներում՝ իբրև սահմանամերձ համայնքների բնակիչների սոցիալ-տնտեսական իրավունքները իրագործող մարմին[22]:

Հայաստանյան սահմանամերձ և ոչ սահմանամերձ համայնքների բնակիչների համար իրավունքի հարցն առավել շատ, քան Ղարաբաղում լցված էր քաղաքական բովանդակությամբ: Հատկապես միջին և ավագ սերնդի կանայք և տղամարդիկ վերլուծում էին իբրև քաղաքացու իրենց այնպիսի իրավունքների շրջանակներ, ինչպիսիք էին ազատ ընտրելու իրավունքը, ընտրելուց հետո պաշտոնյաների քաղաքական գործունեությանը հետևելու և նրանց նկատմամբ պահանջներ ներկայացնելու իրավունքը: Նրանք կարողանում են արտահայտել սեփական քաղաքական պահանջը և նոր պահանջներ ձևավորել. այս կարողությունը խարսխված է իբրև քաղաքացու իրենց կարևորության գիտակցման վրա: Այս տեսանկյունից կարևոր է դառնում նաև ազատ խոսքի իրավունքը՝ որոշ դեպքերում, սակայն, դառնալով շփոթի և մտահոգության առարկա: Առաջ է գալիս ազատ խոսքի և դրանով շրջապատին վնասելու մտավախությունը՝ բնորոշելով հատկապես տղամարդկանց ազատ խոսքի այսօրինակ ըմբռնումը: Խոսքի ազատությունը նրանց կողմից ընկալվում է իբրև առիթից օգտվելու հնարավորություն՝ առկա հեղինակությունները և իշխանական հանգույցները սասանելու, մարդկանց «արժանապատվության և պատվի իրավունքը» ոտնահարելու վտանգ[23]:

22. Նույն տեղում
23. Նույն տեղում

Խոսքի ազատության իրավունքը քննարկվում էր հատկապես հեղափոխության համատեքստում՝որպես քաղաքացիների քաղաքական պահանջատիրության մեխանիզմ:

Թեև անդրադարձանք սահմանամերձ ու ոչ սահմանամերձ համայնքներում պատերազմի և խաղաղության փորձառությունների և ըմբռնումների, ինչպես նաև սոցիալ-տնտեսական և քաղաքական մտահոգությունների տարբերություններին, կարևոր է ընդգծել, որ *խաղաղության իրավունքը* կարևոր է բոլորի համար՝ անկախ սահմանից ունեցած հեռավորության: Պատերազմական գործողությունների վտանգը և կյանքի հանդեպ սպառնալիքը հասուն տարիքի սահմանամերձ բնակիչների մտքում անընդհատ առկա, միաժամանակ առկախված մի դրություն են, կյանքի դրվածք: Կյանքի իրավունքը առանձնահատուկ ձևակերպում և համատեքստ ունի նաև Հայաստանի սահմանամերձ բնակավայրում: Միաժամանակ «ապրելու իրավունքը» մրցակցում է հայրենիքում ապրելու ցանկության հետ: Արտագաղթը նշանակում է հրաժարում, բայց միաժամանակ պաշտպանված ապրելու իրավունքի իրագործում: Պաշտպանված իրավունքներով ապրելու իրավունքի գիջումը, թվում է, ընդունելի չէ, սակայն «ապրելու իրավունքը» գիջելի է ուրիշի, հատկապես հարազատների կյանքի իրավունքին: Անձնազոհական կեցվածքով ապրելու այս դիրքորոշումը չքննարկվող ճշմարտության պես ոչ միշտ է հնչում, սակայն հաճախ ենթադրվում է սահմանին ապրողների խոսակցություններում[24]:

Թեև արժեք հռչակվող իրավունքների ոտնահարումն ու սահմանափակումները քննադատելի են, սեփական իրավունքները և ազատությունները պաշտպանելու պատրաստակամությունը՝ ձևակերպված գիտակցում, սակայն դրանցից կամավոր հրաժարումը ոչ միայն պատրաստակամություն է, այլև սովորական պրակտիկա: Սեփական իրավունքի գիջումը ի հայտ է գալիս դիմացինին՝ առավել բարձր իշխանություն ունեցողին չվնասելու, նաև վատություն չանելու բարոյական սկզբունքի արդարացմամբ: Չի քննարկվում

24. Նույն տեղում

նաև ընտանիքում ավագ անդամներին արտոնված ավելի մեծ իրավունքների հարցը՝ դրանք ընկալելով որպես կյանքի սոցիալ-բարոյական դրվածք: Այս տեսանկյունից սեփական իրավունքների ոտնահարումը պակաս չափով է կարևորվում: Միաժամանակ իրավունքների զիջումը մեկնաբանվում է իբրև թուլություն, նույնիսկ մտերիմների կողմից շահագործման հնարավոր առիթ:

Իրավունքը, դրա պաշտպանությունը և դրա կամավոր զիջման մասին խոսակցությունը հիմնականում մնում են մասնավոր կյանքի սահմաններում և չեն վերաբերում համայնքային կամ հանրային-քաղաքական կյանքին: Ինքնին նման մասնավորեցված ըմբռնումները և այս ըմբռնումների շերտերը նախանշում են իշխանական կառույցների նկատմամբ մարտահրավերներ նետելու պատրաստակամության ցածր աստիճանը, դրանք ավելի շատ շրջանցելու, քան հաղթահարելու միտումը[25]:

25. Նույն տեղում

Ստեփանակերտի օդանավակայան, 2019

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՄԱՐԴՈՒ ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Իրավունքը մարդ իր մեջ պետք է պարտադիր սերմանի, որ պարտադիր պետք է մասնակցի [պատերազմին] և պահի իր պապենական հողը, որպեսզի դարավոր պատմությունը չվերանա, ոչ թե փախնի այստեղից, որ փրկվի: ***Ուշի, 14-18 տ. տղա***

Մարդուն չխաբեն, չշահագործեն, մարդու աշխատածը գնահատեն, դա է կարևորը: ***Ուշի, 35-50 տ. կին***

Ազատությունը, օրինակ՝ խոսքի ազատությունը: Իրավունքներ շատ կան, բայց համարյա բոլորն էլ պետք է պաշտպանվեն: Հիմնականը ազատությունն է: Մինչև հեղափոխությունը որ այս ազատությունը չի եղել, մարդիկ ասում են, որ նույնիսկ եթե փոփոխություն էլ չլինի (չնայած կա, ես գիտեմ), միայն այն, որ կարողանում եմ սրա մասին, նրա մասին ազատ խոսեմ, դա բավական է: ***Հրազդան, 19-35 տ. տղամարդ***

Ոչ ոք չպետք է կողքից (ծնողներին չի վերաբերում) ասի՝ դու այստեղ մի՛ գնա, այս բանը մի՛ արա: Դա նշանակում է, որ քո իրավունքները ոտնահարում են, ոչ ոք իրավունք չունի դա անի:
Արենի, 14-18 տ. աղջիկ

Ինձ համար իրավունքը, որ թույլատրվի, որ ամեն ինչին մասնակցես. որոշումներ կայացնես, իրավունք լինի, արհամարհված չլինես որպես տարիքն առած: ***Արենի, 50-75 տ. կին***

Որ իր խոսքը անցնում է, տեղ է հասնում: Մարդիկ աշխատավարձ ստանան, տանը չնստեն, առողջ լինեն, ամենակարևորը առողջություն լինի, որ բոլորը ընտանիքում աշխատեն, հույսը չդնեն մեկի վրա: Պայմանները լավ լինեն, խաղաղություն լինի: Պարզ է, որ բոլորս էլ ուզում ենք՝ խաղաղ լինի մեր Հայաստանը, ավելորդ բաներ չլինեն: ***Հրազդան, 50-75 տ. կին***

Ես որպես սիրած զբաղմունք երգում եմ, փոքր ժամանակվանից մեր մշակույթի տանը միջոցառումներ են կազմակերպվել, միշտ ինձ կանչել են, մասնակցել եմ: Ես միշտ ունեցել եմ այդ ցանկությունը՝ առաջինը այնտեղ գնալու, մասնակցելու, ու այնպես չի եղել, որ ես ասել եմ՝ միայն ես պետք է մասնակցեմ, ուրիշը թող չգա, բայց համենայն դեպս ես իմ տեղը [իմ իրավունքը] չեմ զիջել ուրիշին: ***Խաչիկ, 14-18 տ. աղջիկ***

Օրինակ՝ ինձ թվում է, ուրիշ տեղ այդ խնդիրը կա, թեկուզ ուշ ժամի դուրս գալու, հագնվելու և այլն: Այդ խնդիրները մեզ մոտ չկան: Ես կարող եմ, ունեմ հնարավորություն, ես աշխատում եմ, ես եմ իմ գումարը տնօրինում և կարող եմ այդ գումարով գնալ Երևան, գալ: Ինձ ոչ ոք չի խոչընդոտում, որ ես ունենամ այն, ինչ ուզում եմ: ***Արենի, 18-35 տ. կին***

Շուշի, 2019

ՀԵՏԳՐՈՒԹՅՈՒՆ

Չնայած ղարաբաղյան կոնֆլիկտը հանգուցալուծելու հեղափոխության բերած ակնկալիքին՝ թե՛ ղարաբաղյան, թե՛ հայաստանյան հասարակություններն անհաղորդ մնացին բանակցային գործընթացին և դրա բովանդակությանը: Խոստացված թափանցիկությունը և հաշվետու քաղաքականությունը շատ արագ ընկան քաղտեխնոլոգիական և քարոզչական ջանքերի արդյունքում հանրային-քաղաքական օրակարգ նետված «հող հանձնողի», «դավաճանի» պիտակներից շարունակաբար պաշտպանվելու արատավոր թակարդը՝ հետին պլան մղելով հարցի իրական դրության քննարկումը:

«...Բայց ուզում եմ ասել, հաստատեք իմ ասածը, որ մենք պատրաստ ենք ազգովի ջախջախիչ հակահարված տալու Ադրբեջանի ցանկացած սադրանքի: Բայց մենք նաև պատերազմ չենք ուզում: Մենք պատրաստ ենք իսկապես խաղաղ բանակցությունների, մենք պատրաստ ենք հասնելու խաղաղ կարգավորման, բայց նա, ով փորձում է ինձ վրա որևէ կասկած գցել, էլի եմ ասում, նրանք չեն հասկանում, որ Ղարաբաղի հարցի լուծող-չլուծողը կառավարությունը չէ: Ղարաբաղի հարցի լուծողը ժողովուրդն է, և ես ուզում եմ ասել հետևյալը. եթե բանակցային գործընթացի արդյունքում կլինի կարգավորման մի տարբերակ, որին ինքս կհավատամ և կհամարեմ, որ դա լավ տարբերակ է, որևէ մեկը չմտածի, թե ես ձեզնից թաքուն որևէ թուղթ կստորագրեմ կամ որևէ գործողություն կանեմ: Երբ տեսնեմ, որ կա տարբերակ, որի շուրջ իսկապես կարելի է խոսել, ես կգամ և կկանգնեմ այստեղ, բոլոր մանրամասնություններով կներկայացնեմ ձեզ, և դուք կորոշեք՝ մենք գնո՞ւմ ենք այդ տարբերակով կարգավորման, թե՞ չենք գնում: Կորոշեք, որ գնում ենք, ուրեմն

կգնանք, կորոշեք, որ չենք գնում, ուրեմն չենք գնա: Դուք եք բարձրագույն իշխանությունը և որոշողը, և սրանում որևէ կասկած չի կարող լինել»[26]:

Հանրապետության հրապարակում կառավարության 100 օրվա գործունեության ամփոփմանը նվիրված բազմահազար հավաքին Նիկոլ Փաշինյանի ելույթի՝ Ղարաբաղի հարցին նվիրված հատվածը, հետագայում՝ 44-օրյա պատերազմի պարտությունից հետո, դառնալու էր վերջինիս պոպուլիստական հռետորաբանության և վարած քաղաքականության քննադատության առանցքներից մեկը: Մարդիկ հարցնելու էին. «Ինչո՞ւ տեր չկանգնեցիր խոստմանդ և նախքան նոյեմբերի 9-ին Հայաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի միջև համաձայնագրի ստորագրումը այն չքննարկեցիր մեզ հետ»: Իրավացի այս հարցին հնչելու էին պատասխան-արդարացումներ, որոնց առանցքում, ըստ էության, խոստումն իրագործելու անհնարինությունը մեկնաբանելն էր: Փորձ արվեց հեղափոխության ժողովրդականությունը և ընտրություններում հաղթանակը դարձնելու ժողովրդավարության հենման կետ, սակայն գործնականում հետհեղափոխական հռետորաբանությունը և քաղաքականությունները չարաշահեցին ժողովրդի վստահությունը և նրանից ստացած քվեն՝ դարձնելով այն ընդամենը հղման մի կետ: Լինելով չհանգուցալուծված ղարաբաղյան հարցի հետևանքների անմիջական կրողը՝ ժողովուրդը ոչ միայն չդարձավ դրա լուծողը, այլև չստացավ կարևոր հարցերից մեկի պատասխանը. ի վերջո ո՞րն է ղարաբաղյան կոնֆլիկտի լուծումը: Տարբեր ձևաչափերով ընթացող գրեթե երեսնամյա բանակցությունները մարդկանց ճակատագրերի մասին այդպես էլ չդարձան հանրային գիտելիք, իսկ վերջին տարիների հանրային-քաղաքական դիսկուրսները մնացին «հողեր հանձնել-չհանձնելու», «դավաճանի» և «իրական հայրենասերի» արատավոր և դոգմատիկ շրջանի մեջ: Ժողովրդին ոչ միայն չներկայացվեցին ղարաբաղյան կոնֆլիկտի բոլոր մանրամասները, այլև չուրվագծեցին դրա քաղաքական, տնտեսական, մշակութային, տարածաշրջանային և գլոբալ չափումները, բանակցությունների սեղանին տարիներ շարունակ դրված փաստաթղթերի բովանդակությունը և կոնֆլիկտի հանգուցալուծման հնարավոր եղանակները:

Այս համատեքստում, ահա, առկախված պատերազմը, որ անհատական և հանրային-քաղաքական կյանքի վրա շարունակաբար թողնում էր անորոշության դրոշմը, մարդկանց մղում էր փնտրելու ամեն գնով դրանից ձերբազատվելու, պատերազմից հոգնությունը հաղթահարելու, այսպես կոչված, արդարացված ուղիներ: Փխրուն, կորսվող խաղաղությունը հնարավորինս երկար պահելու և այն վերջնականապես հաստատելու նրանց մղումը մեր զրույցների առանցքում էր, իսկ խաղաղության ցանկությունը և դրան հասնելու ուղիները պատկերվում էին ամենատարբեր եղանակներով և դիրքորոշումներով՝ տատանվելով սրբազան կռվի մասին պատկերացումներից մինչև զիջումների միջոցով հարցի կարգավորում: Հռչակելով խաղաղությունն իբրև գերակա իրավունք և արժեք, փորձառելով և ձևակերպելով պատերազմի սարսափն ու արհավիրքը՝ այդուհանդերձ, հանրային հավաքական ընկալումներում խաղաղության վերջնահաստատումը չէր բացառում «վերջին մարտը»:

Պատերազմի և խաղաղության շուրջ դիրքորոշումները խարսխված էին ինչպես կենսափորձի, քաղաքականությունների և իշխող գիտելիքի, այնպես էլ տարածաշրջանային և համաշխարհային ռազմատենչ քաղաքականությունների ուժի յուրահատուկ վերլուծության վրա: Այդ վերլուծությունները հանգում էին խաղաղության՝ հանրությունների ցանկության և պատերազմի բիզնեսի բախման շուրջ դատողություններին:

Առկախված պատերազմական դրության համատեքստում խաղաղության և ազատության իրավունքը կարմիր թելի նման անցնում էր գրեթե բոլոր զրույցներում: Այս առումով Ղարաբաղի հարցը միայն ինքնորոշման կամ տարածքային հարց չէր. խաղաղության ցանկությունը ձևակերպվում էր իբրև խաղաղության իրավունք, իրավունք, որ կարելի էր ձեռք բերել նաև պատերազմի գնով, և

26. primeminister.am. (2018, օգոստոս 17). *Վարչապետ Նիկոլ Փաշինյանի ելույթը պաշտոնավարման 100 օրվան նվիրված հանրահավաքին*. վերցվել է՝ https://bit.ly/3ttAOEP

իրավունք, որի ձեռքբերման համար «հողեր հանձնելը» մեծ մասամբ համարվում էր անընդունելի, սակայն այդ կերպ խաղաղության գործնական նյութականացումը չէր քննարկվում և մտածվում: Այդուհանդերձ, այս տարածված մտայնությանը կային հակադրվող դիրքորոշումներ. խաղաղության և զարգացման անհրաժեշտությունը գերակա էր «հողից» և մարդկային կորուստներից:

Չնայած իրավունքի որոշ գոյացական ըմբռնումների՝ վերջինիս շուրջ քննարկումները կամ բախվում էին լռության և դժկամության, կամ բացահայտում էին դրա կենցաղային ակունքը՝ այն կապելով և նույնացնելով սոցիալական խնդիրների հետ:

Չնայած իրավունքների պաշտպանության կարևորության մասին հռչակումներին՝ դրանցից կամավոր հրաժարումը ոչ միայն պատրաստակամությունն էր, այլև սովորական պրակտիկա ինչպես Ղարաբաղում, այնպես էլ Հայաստանում: Սեփական իրավունքի զիջումը ի հայտ էր գալիս առավել բարձր իշխանություն ունեցողին չվնասելու, նաև վատություն չանելու բարոյական սկզբունքի արդարացմամբ:

Որոշ առանձնահատկություններով և նրբություններով հանդերձ՝ առկախված պատերազմը շրջանակում էր մարդկանց սոցիալական կյանքը ինչպես Ղարաբաղում, այնպես էլ Հայաստանում՝ ակնբախ դարձնելով ռազմական ոլորտի գերակայությունը հանրային կյանքի այլ ոլորտների նկատմամբ: Հատկապես սահմանամերձ համայնքներն այսուհետ կորցնում էին սոցիալական կյանքի բազմազանություն ունենալու հեռանկարը. միակ կենսաձևը և կենսապայմանը, որ մտածվում էր, «սահմանապահ» համայնք լինելն էր:

Այսպիսով՝ այս հետազոտությունը հետահայաց կերպով երևան է բերում այն տարաշերտ ու ներհակ ըմբռնումները, որոնք ձևավորվել են ղարաբաղյան հարցի երեսնամյա խմորման և պատերազմի ու խաղաղության՝ հանրությունից կտրված քաղաքականությունների, դրանց շուրջ իշխող գիտելիքի վերարտադրության և սեփական փորձառության արդյունքում: Ուստի Ղարաբաղյան երկրորդ պատերազմի և դրանից քաղած դասերի համատեքստում խիստ անհրաժեշտ է վերագտնել (վերստեղծել) հանրության հետ խզված հաղորդակցության եղանակներ և մեխանիզմներ՝ հաղթահարելու բարդ սոցիալ-քաղաքական հարցերի շուրջ քննարկումներից շարունակաբար խուսափելու քաղաքականությունները:

Արփի Մանուսյան
փետրվար, 2021

Մարտակերտ, 2019

ՁԱՅՆԵՐ ՊԱՏԵՐԱ

ISBN 978-9939-1-1269-5